Հավելված՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2023 թվականի հունվարի 25-ի թիվ 10- Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3-4 էջ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 5-6

ԷՋՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 7-11 էջ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 12-65 էջ

ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 66-69էջ

ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 70-73էջ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 74-77 էջ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ «ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ» և «ԳԱՂՏՆԻ»

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 199-Ա որոշում
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում, ՀՀ կառավարության 23 ապրիլի 2020 թվականի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638-Լ որոշում, ՀՀ կառավարության 23.12.2021 թվականի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին թիվ 2121-Ն որոշում, ՀՀ կառավարության 15.06.2018 թվականի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 706-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» N 751-Լ որոշում, ինչպես նաև կանոնակարգող այլ իրավական ակտեր ու պայմանագրերից բխող իրավահարաբերություններ:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2022 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը և ընթացակարգերը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն:

Հաշվեքննության ընթացքում, ըստ անհրաժեշտության, կիրառվել են՝ զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի տասներորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 308-Ա որոշման հավելվածի (ՀՀ ՀՊ 2022 թվականի գործունեության ծրագրի) առաջին մասի 8-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 199-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության» առաջադրանքի շրջանակներում իրականացվող հաշվեքննության ընթացքում, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, 2022 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ՀՊԵ/01/599-2022 գրությամբ ՀՀ ոստիկանությունից պահանջվել է հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվություն, որին ի պատասխան տեղեկատվությունը ներկայացվել է 2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 29/22 ՀԳ գրությամբ՝ մասնակի և ոչ ամբողջական: Այնուհետև 2022 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 1/29/108004-22 գրությամբ ներկայացվել է լրացուցիչ տեղեկատվություն, որը չի համապատասխանել 2022 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ՀՊԵ/01/599-2022 գրությամբ պահանջված՝ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների տրանսպորտային միջոցների վերաբերյալ հավելված 5-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին, չի պարունակել վերլուծության համար անհրաժեշտ տվյալներ և կրկին ներկայացվել է ոչ ամբողջական: Այսպիսով՝ ինն ամիսների հաշվեքննության շրջանակներում հաշվեքննության օբյեկտի կողմից կրկին չի տրամադրվել տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը, որի հետևանքով արձանագրվում է անհամապատասխանություն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջը:

Հիմք ընդունելով, որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով սույն հաշվեքննությունը սահմանափակված է կատարման ու ՀՀ Ազգային ժողով ներկայացման առավելագույն ժամկետով, հաշվեքննության արդյունքները ամփոփվել են ներկայացված տվյալների շրջանակում:

Ուսումնասիրելով առկա տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE և LSREP) համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար: 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության իրականացման համար հիմնական ռիսկային խնդիրներ են դիտարկվել ինչպես աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված վճարների, այնպես էլ՝ գնումների ոլորտը

կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ գնման գործընթացների, այդ թվում՝ գնումների պլանավորման, գնման գործընթացների կազմակերպման (ներառյալ գնման առարկաների բնութագրերի հաստատումը), պայմանագրերի կնքման, կատարման և կառավարման հետ կապված խնդիրները: Անդրադարձ է կատարվել նաև Պետական մարմնի գործունեությունը կանոնակարգող մի շարք օրենքների ու իրավական ակտերի պահանջների համապատասխան գործելու և բյուջետային ծրագրերի պլանավորման ու դրանց կատարման աստիճանին:

«ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտի կողմից 2022 թվականի ինն ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքում, ֆինանսական հաշվեքննության տեսանկյունից՝ հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնք գումարային առումով էական չեն և չեն հանգեցրել խեղաթյուրումների:

Համապատասխանության տեսակի հաշվեքննության կատարման արդյունքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվածի համաձայն, Հաշվեքննիչ պալատի 29.12.2022 թվականի թիվ ՀՊԵ/01/735-2022 գրությամբ «ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտի ղեկավարին է ներկայացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 199-Ա որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա «ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ» իրականացված հաշվեքննության արձանագրություն N 1, որին ՀՀ ոստիկանությունը (ՀՀ Ներքին գործերի նախարարությունը) 25.01.2022 թվականի դրությամբ չի պատասխանել: 26.01.2022 թվականի թիվ ՀՊՄ/57/2023 գրությամբ ՀՀ ոստիկանության (ՀՀ Ներքին գործերի նախարարության) կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ, որոնք ներառվել են սյուն ընթացիկ եզրակացությունում:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության 2022 թվականի բյուջեի ինն ամիսների ծախսերի պլանը կազմել է 55,325,191.0 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 58,786,341.7 հազ.դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 55,341,089.7 հազ.դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ՝ 94.13%, դրամարկղային ծախսը կազմել է 55,325,191.0 հազ.դրամ կամ 94.11%, փաստացի ծախսը՝ 52,893,196.5 հազ. դրամ՝ 89.97%: Դրամարկղային և փաստացի ծախսերի շեղումը՝ 2,431,994.5 հազ. դրամը, պայմանավորված է տվյալ ժամանակահատվածում ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով դեբիտորական, կրեդիտորական պարտքերի, այդ թվում պահեստավորված միջոցների շարժով:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները, ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում են ստորև բերված աղյուսակ 1-ով:

Աղյուսակ 1
(հազ.դրամ)

Ծրագիր	Կոդ	Միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Ընդամենը			**49,839,924.6**	**58,786,341.7**	**55,341,089.7**	**55,325,191.0**	**52,893,196.5**	**94.1**
Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում	1096-11003	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում	0.0	43,828.9	8,513.5	8,513.5	8,513.5	19.4
Ոստիկանության կրթական ծառայություններ	1101-11001	Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	690,509.6	690,509.6	613,786.3	613,786.3	613,786.3	88.9
Ոստիկանության կրթական ծառայություններ	1101-11002	Միջին մասնագիտական կրթության ծառայություն	290,588.4	290,588.4	258,300.8	258,300.8	258,300.8	88.9
Ոստիկանության կրթական ծառայություններ	1101-11003	Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	193,328.3	193,328.3	171,847.4	171,847.4	171,847.4	88.9

Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11001	Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	9,356,163.1	13,276,905.5	12,766,444.9	12,758,771.3	13,152,174.0	96.1
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11002	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	0.0	162.0	162.0	162.0	162.0	100.0
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11003	Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	5,897,154.3	5,920,843.0	5,770,685.0	5,770,536.8	5,812,249.5	97.5
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11004	Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	14,110,031.3	13,770,738.7	13,459,389.3	13,456,555.7	13,468,955.2	97.7
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11005	Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհա տրանսպորտային պատահարների կանխարգելում	8,248,590.2	7,338,191.0	7,155,356.2	7,155,346.2	7,516,245.2	97.5
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11007	Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական	1,674,681.9	2,522,002.1	2,271,475.5	2,270,624.9	1,992,966.7	90.0

		տեխնոլոգիաների ներդրում						
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11008	Առողջապահական ծառայությունների տրամադրում	357,157.2	393,680.3	382,927.7	382,927.7	383,797.7	97.3
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11009	Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	27,119.7	27,119.7	18,150.3	18,150.3	27,848.2	66.9
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11010	Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործություն ների դեմ պայքար	4,934,671.1	4,959,744.1	4,763,864.4	4,759,481.7	4,675,410.8	96.0
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-11011	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	0.0	7,149.8	7,149.8	7,149.8	7,149.8	100.0
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	1158-31001	ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	4,059,929.6	9,351,550.3	7,693,036.7	7,693,036.7	4,803,789.6	82.3

2022 թվականի ինն ամիսների ընթացքում, ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված հաշվետվության տվյալների համաձայն՝ պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերը կանխատեսվել են՝ 20,617,060.1 հազ. դրամի չափով, որի դիմաց փաստացի հաշվառման ցուցանիշը կազմել է 25,043,009.6 հազ.դրամ կամ գերակատարվել է 4,425,949.5 հազ. դրամով՝ 21.5%-ով: Ըստ առանձին աղբյուրների կանխատեսված եկամուտները, փաստացի ստացված եկամուտները, փաստացի և ծրագրային ցուցանիշների շեղումները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

(հազ.դրամ)

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄ	Ծրագրային ցուցանիշներ	Ստացված եկամուտներ	Շեղում՝ փաստ-պլան	Կատարման %-ը ծրագրային ցուցանիշներ նկատմամբ
	Ա	Բ	Գ	Դ	Զ
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ, այդ թվում՝	**20,617,060.1**	**25,043,009.6**	**4,425,949.5**	**121.47**
Ա	**Պետական տուրքեր**	**6,060,310.0**	**6,250,145.6**	**189,835.6**	**103.13**
1	Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար	102,250.0	83,204.2	-19,045.8	81.37
2	Պետական գրանցման համար այդ թվում	2,744,490.0	2,319,504.6	-424,985.4	84.51
3	Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար	1,997,580.0	2,237,727.6	240,147.6	112.02
4	Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար	55,500.0	59,747.4	4,247.4	107.65
5	Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար:	1,160,490.0	1,549,961.8	389,471.8	133.56
Բ	**Այլ եկամուտներ**	**14,556,750.1**	**18,792,864.0**	**4,236,113.9**	**129.10**
6	Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ:	10,767.6	9,871.8	-895.8	91.68
7	Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր:	8,484,428.0	11,396,029.1	2,911,601.1	134.32
8	Տոկոսավճարներ և շահաբաժիններ:	0.0	772.5	772.5	100.00
9	ՀՀ ոստիկանության կողմից ծառայությունների մատուցումից մուտքեր:	6,047,404.5	7,366,856.0	1,319,451.5	121.82

10	Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրված այլ եկամուտներ:	14,150.0	19,334.6	5,184.6	136.64

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

4.1 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 411100» և «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 411200» հոդվածներ վերաբերյալ

1. «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 411100» և «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 411200» հոդվածները հաշվեքննության են ենթարկվել որպես մեկ ամբողջություն, քանի որ նրանց փաստացի ծախսագրումը կատարվում և հաշվարկվում է հաշվեգրման սկզբունքով և հարկային պահումները կատարվում են անձի տվյալ ամսվա բոլոր տեսակի եկամուտների ընդհանուր հանրագումարից (աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և այլ վճարներ):

ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է տվյալ միջոցառման աշխատակիցների 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար փաստացի վճարված աշխատավարձի և հավելավճարների, պարգևատրումների, դրամական խրախուսումների և այլ վճարների հաշվարկների վերաբերյալ տեղեկատվություն: Ստացված տվյալների հիման վրա կազմվել է հաշվարկների ամփոփ, որտեղ արտացոլված են հաշվարկի հետ կապված բոլոր սյուները: Ելնելով նրանից, որ հոդվածը, որպես բազմություն, իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ միանման տարրեր, կիրառվել է վիճակագրական ընտրանք: Արդյունքում ընտրանքի չափը կազմել է 41 տարր (41 անուն ազգանուն՝ յուրաքանչյուրը 9 ամիս): Հաշվեքննության է ենթարկվել ընտրանքի յուրաքանչյուր տարրի աշխատանքի ընդունման հիմքերը (հրամաններ, աշխատանքային պայմանագրեր), ստաժը, խումբը, կոչումը, ամսական լրավճարները, հավելումները դրանց համապատասխան կատարվել է պաշտոնական դրույքի գործակցի համադրում «Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի՝ «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն,ինչպես նաև նույն ամսաթվի «Զինված ուժերում, ազգային

անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշումների հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների հետ: «Վերահաշվարկ» հաշվեքննության ընթացակարգի շրջանակներում բոլոր վերոնշյալ դեպքերում կատարվել են լրավճարների, հավելումների հաշվարկների ճշտության համադրումներ: Գործող իրավական ակտերի պահանջների հիման վրա կատարվել է նաև եկամտային հարկի, պարտադիր կուտակայինի դրոշմանիշային վճարների վերահաշվարկ: Արդյունքում զինվորական ծառայողների մասով առկա են հետևյալ անհամապատասխանությունները .

1) Ընտրանքի շրջանակում առկա է թվով երերսունյոթ արձակուրդային կտրոն (ըստ կիրարկության նշանակության հավասարազոր է հրամանի): Հիմք ընդունելով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ, նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի[1]՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ արձակուրդ, ինչպես նաև վերը նշված օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի[2]՝ ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր պահանջները հաշվարկվել է թվով երեսունյոթ արձակուրդային: Արձակուրդայինները վճարվում են տվյալ ամսվա վերջում ընդհանուր աշխատավարձի վճարման ժամանակ: Դեպքերի մեծամասնությամբ չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ:

2) Ընտրանքի շրջանակում թվով վեց անձմայիս ամսին ամբողջական կամ մասնակի (2 անձ 30օր, 3 անձ՝ 28, 1 անձ՝ 15 օր) գտնվելով արձակուրդում համաձայն ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի մայիսի 16-ի թիվ 1381-Ա հրամանի ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ ընդհանուր՝ 1,005,990 ՀՀ դրամ պարգևատրում :

3) Ընտրանքի շրջանակում թվով մեկ անձ՝ հոկտեմբերի 1-ից 30-ը, գտնվել է արձակուրդում: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի[3] տվյալ արձակուրդայինը՝ 318.265 ՀՀ դրամը, պետք է վճարվեր

---

[1] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ հետևյալ արձակուրդները. 1) ամենամյա. 2) ուսումնական. 3) լրացուցիչ:

[2] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողներին տրվում է ամենամյա արձակուրդ, ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր:

[3] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից

սեպտեմբեր ամսին և պետք է արտացոլվեր ինն ամիսների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության դրամարկղային ծախս տողում:

4) Թվով մեկ անձ ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի հուլիսի 7 թիվ 2064-Ա հրամանի 01.07.2022 թվականից ազատվել է աշխատանքից: Վերջնահաշվարկը հաշվարկվել և վճարվել է ամսվա վերջում: Չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի[4] պահանջը, այն է՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ:

5) Թվով չորս անձ համապատասխան պաշտոնին է նշանակվել 2022 թվականի ապրիլի 14-ին, տվյալ ամսվա դրույքը, հասանելիք լրավճարը և հավելումը հաշվարկվել են ըստ տվյալ ամսվա օրացույցային օրերի և ոչ թե փաստացի աշխատած աշխատանքայի օրերով: Չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի պահանջը, այն է՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ:

6) Ընտրանքից թվով մեկ անձ մայիս ամսին գտնվելով արձակուրդում և ունենալով տույժ ստացել է 1 պաշտոնային դրույքաչափով պարգևատրում՝ 184,531 ՀՀ դրամ, և թվով երկու անձ մայիս ամսին ունենալով տույժ ևս ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ ընդհանուր 664,707 ՀՀ դրամ պարգևատրում: Չի պահպանվել ՀՀ ոստիկանապետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 21-Լ հրամանի հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի պահանջները: Վերը նշված դեպքերի մանրամասները ըստ դրանց հաշվարկային տվյալների ամփոփված են սյուն ընթացիկ եզրակացության հավելված 1-ում («ԳԱՂՏՆԻ»):

2. «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 411100» և «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 411200» հոդվածների հաշվեքննության համար ընտրանքային ընտրվել է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերը:

անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

[4] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ Շիրակի մարզում հաշվեքննության են ենթարկվել մարզային վարչությունը և թվով յոթ՝ Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Աշոցքի, Արթիկի, Կումայրիի և Մուշի ոստիկանական բաժինները:
ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է տվյալ միջոցառման աշխատակիցների 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար փաստացի վճարված աշխատավարձի և հավելավճարների, պարգևատրումների, դրամական խրախուսումների և այլ վճարների հաշվարկների վերաբերյալ տեղեկատվություն: Ստացված տվյալների հիման վրա կազմվել է հաշվարկների ամփոփ, որտեղ արտացոլված են հաշվարկի հետ կապված բոլոր սյուները: Ելնելով նրանից, որ հոդվածը, որպես բազմություն, իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ միանման տարրեր, կիրառվել է ընտրանք: Հաշվեքննության է ենթարկվել ընտրանքի յուրաքանչյուր տարրի աշխատանքի ընդունման հիմքերը (հրամաններ, աշխատանքային պայմանագրեր), ստաժը, խումբը, կոչումը, ամսական լրավճարները, հավելումները դրանց համապատասխան կատարվել է պաշտոնական դրույքի գործակցի համադրում «Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի՝ «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն, ինչպես նաև նույն ամսաթվի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշումների հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների հետ: «Վերահաշվարկ» հաշվեքննության ընթացակարգի շրջանակներում բոլոր վերոնշյալ դեպքերում կատարվել են լրավճարների, հավելումների հաշվարկների ճշտության համադրումներ: Գործող իրավական ակտերի պահանջների հիման վրա կատարվել է նաև եկամտային հարկի, պարտադիր կուտակայինի դրոշմանիշային վճարների վերահաշվարկ: Արդյունքում զինվորական ծառայողների մասով առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Ընտրանքի շրջանակում առկա է թվով հիսունինը արձակուրդայինի կտրոն (ըստ կիրարկության նշանակության հավասարազոր է հրամանի): Հիմք ընդունելով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային

շաբաթ, 32-րդ հոդվածի 1-ին մասի[5]՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ արձակուրդներ, ինչպես նաև վերը նշված օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի[6]՝ ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր պահանջները հաշվարկվել է թվով հիսունինը արձակուրդային: Արձակուրդայինները վճարվում են տվյալ ամսվա վերջում ընդհանուր աշխատավարձի վճարման ժամանակ: Դեպքերի մեծամասնությամբ չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի[7] պահանջը, այն է՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ:

2) Թվով յոթ անձ մայիս ամսին ամբողջական կամ մասնակի (ամսվա կեսից ավելին) գտնվելով արձակուրդում համաձայն ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի մայիսի 16-ի թիվ 1381-Ա հրամանի ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 1,397,537 ՀՀ դրամ, պարգևատրում:

3) Ընտրանքից թվով երեք անձ մայիս ամսին ունենալով տույժ ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 741,429 ՀՀ դրամ պարգևատրումը: Չի պահպանվել ՀՀ ոստիկանապետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 21-Լ հրամանի հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի պահանջները:

4) Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պահանջը ընտրանքի շրջանակում թվով հինգ անձի 2022 թվականի հոկտեմբեր ամսվա հասանելիք արձակուրդայինը՝ ընդհանուր 1,278,386 ՀՀ դրամը, պետք է վճարվեր սեպտեմբեր ամսին և պետք է արտացոլվեր ինն ամիսների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության դրամարկղային ծախս տողում:

5) Թվով մեկ անձ 01.07.2022 թվականից ազատվել է աշխատանքից: Վերջնահաշվարկը հաշվարկվել և վճարվել է ամսվա վերջում, ինչի արդյունքում չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը,

---

[5] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ հետևյալ արձակուրդները. 1) ամենամյա. 2) ուսումնական. 3) լրացուցիչ:

[6] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողներին տրվում է ամենամյա արձակուրդ, ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր:

[7] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

այն է՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ընտանիքի շրջանակում առկա է պաշտոնի նշանակման, տեղափոխման, զինվորական կոչման, խմբի, մակարդակի փոփոխման, ուսումնական արձակուրդի, գործուղման գտնվելու 9 դեպք, որոնց դեպքերում տվյալ ամսվա դրույքը, հասանելիք լրավճարը և հավելումը հաշվարկվել են ըստ տվյալ ամսվա օրացույցային օրերի և ոչ թե փաստացի աշխատած աշխատանքայի օրերով: Չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի պահանջը, այն է՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ:

7) ՀՀ ոստիկանությունում զինվորական կոչումների անվանումներով խմբերի լրավճարները հաշվարկվում են համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն որոշմամբ հաստատված ամսական լրավճարի առավելագույն չափով, սակայն մայոր զինվորական կոչման 24-րդ խմբի 6-րդ մակարդակի ամսական լրավճարի չափ է հաշվարկվում 8,004 ՀՀ դրամ որոշումամբ սահմանված 23,004 ՀՀ դրամի փոխարեն, առկա է նման 2 դեպք: Վերը նշված դեպքերի մանրամասները ըստ դրանց հաշվարկային տվյալների ամփոփված են սյուն ընթացիկ եզրակացության հավելված 2-ում («ԳԱՂՏՆԻ»):

ՀՀ Լոռու մարզում հաշվեքննության են ենթարկվել մարզային վարչությունը և թվով յոթ՝ Գուգարքի, Թումանյանի, Սպիտակի, Տաշիրի, Տարոնի, Բազումի, Ստեփանավանի ոստիկանական բաժինները: ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է տվյալ միջոցառման աշխատակիցների 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար փաստացի վճարված աշխատավարձի և հավելավճարների, պարգևատրումների, դրամական խրախուսումների և այլ վճարների հաշվարկների վերաբերյալ տեղեկատվություն: Ստացված տվյալների հիման վրա կազմվել է հաշվարկների ամփոփ, որտեղ արտացոլված են հաշվարկի հետ կապված բոլոր սյուները: Ելնելով նրանից, որ հոդվածը, որպես բազմություն, իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ միանման տարրեր, կիրառվել է ընտրանք:

Հաշվեքննության է ենթարկվել ընտրանքի յուրաքանչյուր տարրի աշխատանքի ընդունման հիմքերը (հրամաններ, աշխատանքային պայմանագրեր), ստաժը, խումբը, կոչումը, ամսական լրավճարները, հավելումները դրանց համապատասխան կատարվել է պաշտոնական դրույքի գործակցի համադրում «Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի՝ «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն, ինչպես նաև նույն ամսաթվի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշումների հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների հետ: «Վերահաշվարկ» հաշվեքննության ընթացակարգի շրջանակներում բոլոր վերոնշյալ դեպքերում կատարվել են լրավճարների, հավելումների հաշվարկների ճշտության համադրումներ: Գործող իրավական ակտերի պահանջների հիման վրա կատարվել է նաև եկամտային հարկի, պարտադիր կուտակայինի դրոշմանիշային վճարների վերահաշվարկ: Արդյունքում զինվորական ծառայողների մասով առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Ընտրանքում առկա է թվով հիսունհինգ արձակուրդայինի կտրոն (ըստ կիրարկության նշանակության հավասարազոր է հրամանի): Հիմք ընդունելով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ, 32-րդ հոդվածի 1-ին մասի[8]՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ արձակուրդներ, ինչպես նաև վերը նշված օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի[9]՝ ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր պահանջները հաշվարկվել է թվով հիսունհինգ արձակուրդային: Արձակուրդայինները վճարվում են տվյալ ամսվա վերջում ընդհանուր աշխատավարձի վճարման ժամանակ: Դեպքերի մեծամասնությամբ չի պահպանվել

[8] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ հետևյալ արձակուրդները. 1) ամենամյա. 2) ուսումնական. 3) լրացուցիչ:

[9] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողներին տրվում է ամենամյա արձակուրդ, ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի[10] պահանջը, այն է՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ:

2) Թվով տասնմեկ անձ մայիս ամսին ամբողջական կամ մասնակի (ամսվա կեսից ավելին) գտնվելով արձակուրդում համաձայն ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի մայիսի 16-ի թիվ 1381-Ա հրամանի ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 2,737,405 ՀՀ դրամ, պարգևատրում:

3) Ընտրանքից թվով չորս անձ մայիս ամսին ունենալով տույժ ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 1,016,572 ՀՀ դրամ պարգևատրումը : Չի պահպանվել ՀՀ ոստիկանապետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 21-Լ հրամանի հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի պահանջները:

4) Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պահանջը ընտրանքի շրջանակում թվով տասնինը անձի 2022 թվականի հոկտեմբեր ամսվա հասանելիք արձակուրդայինը՝ ընդհանուր 3,782,640 ՀՀ դրամը, պետք է վճարվեր սեպտեմբեր ամսին և պետք է արտացոլվեր ինն ամիսների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության դրամարկղային ծախս տողում:

5) Թվով երկու անձ ազատվել է աշխատանքից: Վերջնահաշվարկը հաշվարկվել և վճարվել է ամսվա վերջում, ինչի արդյունքում չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ընտանիքի շրջանակում առկա է պաշտոնի նշանակման, տեղափոխման, զինվորական կոչման, խմբի, մակարդակի փոփոխման, 11 դեպք, որոնց դեպքերում տվյալ ամսվա դրույքը, հասանելիք լրավճարը և հավելումը հաշվարկվել են ըստ տվյալ

[10] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ամսվա օրացույցային օրերի և ոչ թե փաստացի աշխատած աշխատանքայի օրերով: Չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի պահանջը, այն է՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ:

7) ՀՀ ոստիկանությունում զինվորական կոչումների անվանումներով խմբերի լրավճարները հաշվարկվում են համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն որոշմամբ հաստատված ամսական լրավճարի առավելագույն չափով, սակայն մայոր զինվորական կոչման 24-րդ խմբի 6-րդ մակարդակի ամսական լրավճարի չափ է հաշվարկվում 8,004 ՀՀ դրամ որոշմամբ սահմանված 23,004 ՀՀ դրամի փոխարեն, առկա է նման 3 դեպք: Վերը նշված դեպքերի մանրամասները ըստ դրանց հաշվարկային տվյալների ամփոփված են սյուն ընթացիկ եզրակացության հավելված 3-ում («ԳԱՂՏՆԻ»):

3 «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 411100» և «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 411200» հոդվածները հաշվեքննության են ենթարկվել որպես մեկ ամբողջություն, քանի որ նրանց փաստացի ծախսագրումը կատարվում և հաշվարկվում է հաշվեգրման սկզբունքով և հարկային պահումները կատարվում են անձի տվյալ ամսվա բոլոր տեսակի եկամուտների ընդհանուր հանրագումարից (աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և այլ վճարներ): ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է տվյալ միջոցառման աշխատակիցների 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար փաստացի վճարված աշխատավարձի և հավելավճարների, պարգևատրումների, դրամական խրախուսումների և այլ վճարների հաշվարկների վերաբերյալ տեղեկատվություն: Ստացված տվյալների հիման վրա կազմվել է հաշվարկների ամփոփ, որտեղ արտացոլված են հաշվարկի հետ կապված բոլոր սյուները: Ելնելով նրանից, որ հոդվածը, որպես բազմություն, իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ միանման տարրեր, կիրառվել է ընտրանք, որում ընդգրկվել է թվով տասնհինգ ստորաբաժանում: Հաշվեքննության է ենթարկվել ընտրանքի յուրաքանչյուր տարրի աշխատանքի ընդունման հիմքերը (հրամաններ, աշխատանքային պայմանագրեր), ստաժը, խումբը, կոչումը, ամսական լրավճարները, հավելումները դրանց համապատասխան կատարվել է պաշտոնական

դրույքի գործակցի համադրում «Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի՝ «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն, ինչպես նաև նույն ամսաթվի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշումների հավելվածներով սահմանված համապատասխան գործակիցների հետ: «Վերահաշվարկ» հաշվեքննության ընթացակարգի շրջանակներում բոլոր վերոնշյալ դեպքերում կատարվել են լրավճարների, հավելումների հաշվարկների ճշտության համադրումներ: Գործող իրավական ակտերի պահանջների հիման վրա կատարվել է նաև եկամտային հարկի, պարտադիր կուտակայինի դրոշմանիշային վճարների վերահաշվարկ: Արդյունքում զինվորական ծառայողների մասով առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Ընտրանքի շրջանակում առկա է թվով քսանվեց արձակուրդային կտրոն (ըստ կիրարկության նշանակության հավասարազոր է հրամանի): Հիմք ընդունելով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ, նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի[11]՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ արձակուրդ, ինչպես նաև վերը նշված օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի[12]՝ ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր պահանջները հաշվարկվել է թվով քսանվեց արձակուրդային: Արձակուրդայինները վճարվում են տվյալ ամսվա վերջում ընդհանուր աշխատավարձի վճարման ժամանակ: Դեպքերի մեծամասնությամբ չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ:

[11] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ հետևյալ արձակուրդները. 1) ամենամյա. 2) ուսումնական. 3) լրացուցիչ:

[12] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոստիկանության ծառայողներին տրվում է ամենամյա արձակուրդ, ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր:

2) Ընտրանքի շրջանակում թվով հինգ անձ մայիս ամսին ամբողջական կամ մասնակի (24, 19, 14, 30, 20 օր) գտնվելով արձակուրդում համաձայն ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի մայիսի 16-ի թիվ 1381-Ա հրամանի ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 708,359 ՀՀ դրամ պարգևատրում:

3) Ընտրանքի շրջանակում թվով վեց անձ՝ օգոստոսի 31-ից հոկտեմբերի 9, սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 19-ը, սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 17-ը, սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 29-ը, հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 9-ը և հոկտեմբերի 3-ից հոկտեմբերի 17-ը, գտնվել են արձակուրդում: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի[13] տվյալ արձակուրդայինը՝ ընդհանուր 797,326 ՀՀ դրամը, պետք է վճարվեր սեպտեմբեր ամսին և պետք է արտացոլվեր ինն ամիսների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության դրամարկղային ծախս տողում:

4) Թվով մեկ անձ 27.04.2022 թվականից ազատվել է աշխատանքից: Վերջնահաշվարկը հաշվարկվել և վճարվել է մայիս ամսվա վերջում: Չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի[14] պահանջը, այն է՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ:

5) Թվով չորս դեպքում համապատասխան պաշտոնին նշանակվելու և/կամ տեղափոխվելու ժամանակ տվյալ ամսվա դրույքը, հասանելիք լրավճարը և հավելումը հաշվարկվել են ըստ տվյալ ամսվա օրացույցային օրերի և ոչ թե փաստացի աշխատած աշխատանքայի օրերով: Չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի պահանջը, այն է՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ:

6) Ընտրանքից թվով մեկ անձ մայիս ամսին գտնվելով արձակուրդում և ունենալով տույժ ստացել է 1 պաշտոնային դրույքաչափով պարգևատրում՝ 125,005 ՀՀ դրամ, և թվով չորս անձ մայիս ամսին ունենալով տույժ ևս ստացել են 1 պաշտոնային դրույքաչափով պարգևատրումը ընդհանուր 509,278 ՀՀ դրամ: Չի պահպանվել ՀՀ ոստիկանապետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 21-Լ հրամանի հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի պահանջները: Վերը նշված դեպքերի

---

[13] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

[14] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

մանրամասները ըստ դրանց հաշվարկային տվյալների ամփոփված են սյուն ընթացիկ եզրակացության հավելված 4-ում («ԳԱՂՏՆԻ»):

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ ամփոփ.

1. ՀՀ ոստիկանությունում զինվորական ծառայողների մասով որպես այդպիսին արձակուրդային չի հաշվարկվել: Չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ, 32-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ հետևյալ արձակուրդները. 1) ամենամյա. 2) ուսումնական. 3) լրացուցիչ, ինչպես նաև վերը նշված օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողներին տրվում է ամենամյա արձակուրդ, ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր պահանջները արձակուրդայիների հաշվարկելիս առկա են անհամապատասխանություններ (Հավելված 1,2,3,4): Դեպքերի ճնշող մեծամասնությամբ ամենամյա, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդայինները վճարվում են տվյալ ամսվա վերջում՝ աշխատավարձի վճարման ժամանակ, այսպիսով՝ չի պահպանվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Քննարկվել է ոստիկանության ստորաբաժանումների՝ Երևան քաղաքի և մարզային վարչությունների անձնակազմի գծով տեղակալների հետ ծառայողների շրջանում ամենամյա արձակուրդների տրամադրումը նախատեսվածից մեկ շաբաթ շուտ հայտարարելու և դրա վերաբերյալ տեղեկացնելու ֆինանսական ծառայություններին, որոնց հայտերի հիմքով հատկացումները կիրականացվի սահմանված ժամկետներում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

2. Թվով քսանինը անձ մայիս ամսին ամբողջական կամ մասնակի գտնվելով արձակուրդում համաձայն ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի մայիսի 16-ի թիվ 1381-Ա հրամանի ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 5,849,291 ՀՀ դրամ, պարգևատրում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

ՀՀ ոստիկանության պետի 16.05.2022թ. թիվ 1381-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ պարբերության ի հավելումն ՀՀ Ոստիկանության պետի 11.09.2019թ. թիվ 21-Լ հրամանի հաստատված կարգով տրվում է պարգևատրում՝ որակյալ աշխատանքի համար ոստիկանության ծառայողներին (աշխատողներին) յուրաքանչյուրին մեկ պաշտոնային դրույքաչափով, որով սահմանվել է բացառություն ՀՀ Ոստիկանության պետի 11.09.2019թ. թիվ 21-Լ հրամանով հաստատված պայմանների և սահմանափակումների:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Պարզաբանումը չի ընդունվում, քանի որ համաձայն ՀՀ Ոստիկանության պետի 11.09.2019 թվականի «ՀՀ ոստիկանության ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում, տալու կարգը և չափերը (ցուցանիշները)» մասին թիվ 21-Լ հրամանի 1-ին կետի, այն է՝ ոստիկանության ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում տրվում է որակյալ աշխատանքի կամ հատուկ առաջադրանքների կատարման համար և վերը նշված հրամանի 16-րդ կետում հստակ սահմանված է, որ դեպքում է աշխատանքը համարվում որակյալ (բարեխիղճ), այն է՝ կատարված աշխատանքը համարվում է որակյալ (բարեխիղճ), քանի դեռ ծառայողը (աշխատողը) հաշվետու ժամանակահատվածում չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ հաշվետու ժամանակահատվածում ծառայողի (աշխատողի) աշխատողի արդյունավետությունը նրա ուղղակի ղեկավարի կողմից չի գնահատվել անբավարար, և ըստ նույն հրամանի 15-րդ կետի՝ պարգևատրում չի տրվում ոչ որակյալ (անբարեխիղճ) աշխատանքի աշխատանքի համար, ինչպես նաև ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված անձանց (բացառությամբ ոստիկանության զորքերի զինծառայողների) ծառայության (աշխատանքի) առաջին վեց ամսվա ընթացքում: Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 16.05.2022թ. թիվ 1381-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ պարբերության պարգևատրումը տրվում է որակյալ աշխատանքի համար և հրամանում նշված չէ կոնկտետ, որ ժամանակահատվածի որակյալ աշխատանքի համար:

3. Ընտրանքից թվով տասնհինգ անձ մայիս ամսին ունենալով տույժ ստացել են 1 պաշտոնային դրույքաչափ՝ ընդհանուր 3,241,522 ՀՀ դրամ պարգևատրումը: Չի պահպանվել ՀՀ ոստիկանապետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 21-Լ հրամանի հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի պահանջները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Նույնը ինչ 2-րդ կետում

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Նույնը ինչ 2-րդ կետում

4. Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պահանջը ընտրանքի շրջանակում թվով երեսունմեկ անձ 2022 թվականի հոկտեմբեր ամսվա հասանելիք արձակուրդայինը՝ ընդհանուր 6,176,617 ՀՀ դրամը, պետք է վճարվեր սեպտեմբեր ամսին և պետք է արտացոլվեր ինն ամիսների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության դրամարկղային ծախս տողում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Քննարկվել է ոստիկանության ստորաբաժանումների՝ Երևան քաղաքի և մարզային վարչությունների անձնակազմի գծով տեղակալների հետ ծառայողների շրջանում ամենամյա արձակուրդների տրամադրումը նախատեսվածից մեկ շաբաթ շուտ հայտարարելու և դրա վերաբերյալ տեղեկացնելու ֆինանսական ծառայություններին, որոնց հայտերի հիմքով հատկացումները կիրականացվի սահմանված ժամկետներում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

5. Վերջնահաշվարկները զինվորական ծառայողների մասով հաշվարկվում և հիմնականում վճարվում են ամսվա վերջում, ինչի արդյունքում չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ

պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝
Ստորաբաժանումներին տրվել է համապատասխան ցուցում վերջնահաշվարկները սահմանված ժամկետում կատարելու և առաջացած պահանջի դեպքում ներկայացնելու հայտեր ֆինանսական հատկացումների համար:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝
Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

6. Պաշտոնի նշանակման, տեղափոխման, զինվորական կոչման, խմբի, մակարդակի փոփոխման, ուսումնական արձակուրդի, գործուղման գտնվելու դեպքերում տվյալ ամսվա դրույքը, հասանելիք լրավճարը և հավելումը հաշվարկվել են ըստ տվյալ ամսվա օրացույցային օրերի և ոչ թե փաստացի աշխատած աշխատանքայի օրերով: Չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի պահանջը, այն է՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝
- Արձակուրդայինի չհաշվարկվելու հիմք է ընդունվել <<Ոստիկանությունում ծառայության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողների համար սահմանվում են վարձատրության պահպանմամբ հետևյալ արձակուրդները.

1 (ամենամյա.
2 (ուսումնական.
3 (լրացուցիչ (ելնելով ծառայության ստաժից, վնասակար պայմաններում պարտականությունների կատարման և ծառայության հատուկ բնույթից):

Նշված օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողներին տրվում է ամենամյա արձակուրդ: Ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 30 օր: Ծառայողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով, յուրաքանչյուրը՝ 15 օր տևողությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով

հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:

Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. <<....Եթե իրավական ակտով սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է ոչ թե ըստ օրացույցային օրերի, այլ աշխատանքային օրերով, ապա դա պետք է հատուկ նշվի: Ժամերը գրվում են թվերով՝ քսանչորսժամյա ռեժիմով: Ժամերը նշելիս ժամը և րոպեն արտահայտող թվերի միջև դրվում է երկու կետ, իսկ դրանցից առաջ նշվում է<< ժամը>> բառը>>:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հստակ է, որ ոստիկանությունն առաջնորդվում է Օրենքի կարգավորումներով, որտեղ հստակ սահմանվում է վարձատրության պահպանմամբ արձակուրդների տեսակները և ծառայողին տրամադրվող ամենամյա տևողությունը՝ հաշվարկված օրերով:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Ըստ արձանագրվածի՝ չի պահպանվել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի պահանջը, սակայն ներկայացված պարզաբանմամբ անդրադարձ չի կատարվում օրենքի տվյալ կարգավորման մասին ու ըստ այդմ պարզաբանումն ըստ էության չի վերաբերվում նշված անհամապատասխանությանը:

7. ՀՀ ոստիկանությունում զինվորական կոչումների անվանումներով խմբերի լրավճարները հաշվարկվում են համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն որոշմամբ հաստատված ամսական լրավճարի առավելագույն չափով, սակայն մայոր զինվորական կոչման 24-րդ խմբի 6-րդ մակարդակի ամսական լրավճարի չափ է հաշվարկվում 8,004 ՀՀ դրամ որոշմամբ սահմանված 23,004 ՀՀ դրամի փոխարեն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 710-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N4 հավելվածի 1-ին բաժնի 24-րդ խմբի «ոստիկանության մայոր» կոչումով պաշտոնի համար 6-րդ և 7-րդ մակարդակների լրավճարները կազմում են համապատասխանաբար 23004 դրամ և 26707 դրամ:Նշված լրավճարների կիրառման դեպքում տվյալ մակարդակներին համապատասխան պաշտոնների ամսական աշխատավարձերի չափերը գերազանցում են 25-րդ խմբի «ոստիկանության փոխգնդապետ» կոչումով պաշտոնների 6-րդ և 7-րդ խմբերին համապատասխան աշխատավարձերի չափերը:

Օրինակ.

24-րդ խումբ

6-րդ մակարդակ՝ պաշտոնային դրույքաչափ 4.49x66140=296969 դրամ, լրավճար 23004 դրամ, ընդամենը 319973 դրամ,

25-րդ խումբ

6-րդ մակարդակ՝ պաշտոնային դրույքաչափ 4.56x66140=301598 դրամ, լրավճար 7294 դրամ, ընդամենը 308892 դրամ,

Շեղումը՝ 24խ./25խ. 11081 դրամ:

24-րդ խումբ

7-րդ մակարդակ՝ պաշտոնային դրույքաչափ 4.62x66140=305567 դրամ, լրավճար 26707 դրամ, ընդամենը 332274 դրամ:

25-րդ խումբ

7-րդ մակարդակ՝ պաշտոնային դրույքաչափ 4.70x66140=310858 դրամ, լրավճար 7294 դրամ, ընդամենը 318152 դրամ:

Շեղումը՝ 24խ./25խ. 14122 դրամ:

Նշված անհամապատասխանությունը բացառելու նպատակով պահպանվել է 24-րդ խմբի 6-րդ և 7-րդ մակարդակների փաստացի վճարվող լրավճարների չափերը՝ 8004 դրամ և 8944 դրամ, որը ներառվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թվականի հուլիսի 3-ի Թիվ 712-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծում և 2023 թվականի հունվարի 16-ի թիվ 21/02Գ, 21/01ՀԳ, 1/21/3287-23, 21/02ՀԳ գրություններով դրվել է շրջանառության մեջ և ուղարկվել ֆինանսների նախարարություն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

4.2 ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ

Ոստիկանությունը՝ 2022 թվականին ՀՀ՝ Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում ձևավորվող նոր պարեկային ծառայության համար նախատեսել է ձեռք բերել 175 ամենագնաց ավտոմեքենա:

ՀՀ Կառավարությունը 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1129-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարվել է վերաբաշխում, N 3 աղյուսակում կատարվել է փոփոխություններ և ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարվել է փոփոխություններ և լրացումներ: Որոշման հավելված 1-ի համաձայն ոստիկանական համակարգի կազմակերպաիրավական կատարելագործման, ոստիկանության գործունեության նկատմամբ հասարակական կարծիքի բարելավման և վստահության բարձրացման նպատակով ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ ոստիկանությանը տրամադրել է 3,107,500.0 հազ. դրամ: Թույլատրվել է ՀՀ ոստիկանությանը՝ ոստիկանական մեքենաների ձեռքբերումն իրականացնել մեկ անձից՝ «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերությունից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա, մեկ անձից գնում կատարելու ձևով, չկիրառելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության երկրորդ նախադասության (հնարավոր մասնակիցների թիվը չի կարող պակաս լինել երեքից) պահանջները: Ինչպես նաև թույլատրել է ՀՀ ոստիկանությանը ոստիկանական մեքենաների ձեռքբերման նպատակով մատակարար կազմակերպությանը հատկացնել կանխավճար՝ գնման առարկայի 100%-ի չափով, հիմք ընդունելով մատակարար կազմակերպության կողմից ներկայացված հատկացվող գումարի 100%-ի չափով բանկային երաշխիքի ձևով ապահովումը: Որոշման 5-րդ հավելվածով, թվով 175 ամենագնացներից, 45 հատ մեխանիկական փոխանցումատուփով մեքենաների ձեռքբերման համար նախատեսվել է 715,500.0 հազ. դրամ, և 130 հատ ավտոմատ փոխանցումատուփով մեքենաների ձեռքբերման համար՝ 2,392,000.0 հազ. դրամ: Որոշումն ուժի մեջ է մտել 23.07.2022 թվականին:

ՀՀ ոստիկանության ավտոտնտեսության պետի (պատասխանատու ստորաբաժանման ղեկավար) 25.07.2022 թվականի զեկուցագրի հիման վրա՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունում կազմակերպվել է Ոստիկանության

կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման «Մեկ անձ» գնման ընթացակարգը, որի արդյունքում, նույն օրը, ՀՀ ոստիկանության և «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ ծածկագրով պայմանագիրը և փոխանցման հաշվի հետ միասին, նույն օրը, ուղարկվել է ֆինանսաբյուջետային վարչություն՝ ի տնօրինություն:

Պայմանագրի կնքման պահին գործել է ՀՀ կառավարության 2022 թվականի N 1129-Ն որոշմամբ սահմանված պահանջները, սակայն ՀՀ ոստիկանությունը և մատակարար «Տոյոտա-Երևան» ՍՊ ընկերությունը պայմանագիրը կնքելիս չեն պահպանել նշված որոշման սահմանված իմպերատիվ բնույթի պահանջը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթը և գնման ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ ծածկագրով պայմանագրի 3-րդ բաժնի (գինը և վճարման կարգը) 3.2 կետով սահմանել են, որ կանխավճարի ապահովումը կներկայացվի կանխավճարի հատկացումից 10 օր հետո:

Այնուհետև, 2022 թվականի հուլիսի 26-ին (վերոնշյալ պայմանագրի կնքման հաջորդ օրը) ՀՀ կառավարության գրավոր ընթացակարգով ընդունած N 1135-Ն որոշումով, փոփոխություն է կատարվել իր հուլիսի 21-ի N 1129-Ն որոշման մեջ, և 4-րդ կետը վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Թույլատրել ՀՀ ոստիկանությանը ոստիկանական մեքենաների ձեռքբերման նպատակով մատակարար կազմակերպությանը հատկացնել կանխավճար՝ պայմանագրի գնի 100 տոկոսի չափով, պայմանով, որ մատակարար կազմակերպությունը վճարված կանխավճարի չափով բանկային երաշխիքի ձևով կանխավճարի ապահովումը պատվիրատուին ներկայացնում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարությունում հաշվառելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում»: Իսկ որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ այսինքն՝ 28.07.2022 թվականին, և տարածվում է 2022 թվականի հուլիսի 26-ից գործող հարաբերությունների նկատմամբ:

Սակայն, դեռևս 27.07.2022 թվականին պայմանագրի գինը՝ 3,107,500.0 հազ. դրամը ամբողջությամբ, որպես կանխավճար (կանխավճարի ապահովման երաշխիքի բացակայության պարագայում), փոխանցվել է մատակարարի բանկային հաշվին :

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ

Հաշվեքննող խմբի կողմից ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունում և ավտոտեսությունում (պատասխանատու ստորաբաժանում) իրականացվել է

պայմանագրի պայմանների համադրում համապատասխան իրավակարգավորումների հետ, ինչի արդյունքում արձանագրվել է՝

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 437-ի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով, իսկ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 438-ի՝ «Պայմանագիր և օրենք», 1-ին մասի պահանջներով՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

ՀՀ ոստիկանությունը թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ ծածկագրով պայմանագիրը 2022 թվականի հուլիսի 25-ին կնքելիս՝ չի պահպանել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 438-ի 1-ին մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի և Կառավարության 2022 թվականի N 1129-Ն որոշման պահանջները՝ մասնավորապես, պայմանագրի 3-րդ բաժնի (պայմանագրի գինը և վճարման կարգը) 3.2 կետով սահմանել են պայմաններ, որոնք հակասում են պայմանագրի կնքման պահին գործող իրավական ակտերին:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 438-ի 1-ին մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 35.-ի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 71-րդ կետի 1-ին մասի զ) պարբերության, ինչպես նաև ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N1129-Ն որոշման 4-րդ կետի պահանջների հետ (պայմանագիրը կնքելու և կանխավճարը փոխանցելու օրերին (2022 թվականի հուլիսի 25-27) գործող խմբագրությամբ):

3. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի՝ Գլուխ XVIII. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, 114-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ եթե պայմանագրով նախատեսված է կանխավճար, ապա՝ կանխավճարը հատկացնելու համար լիազորված մարմնի գանձապետական համակարգ է մուտքագրվում վճարման հանձնարարագիրը և կանխավճարի ապահովման առկայությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

Տվյալ դեպքում լիազորված մարմնի գանձապետական համակարգ է մուտքագրվել միայն վճարման հանձնարարագիրը, իսկ կանխավճարի ապահովման փաստաթղթերը ո՛չ, քանի որ «Տոյոտա-Երևան» ՍՊ ընկերության կողմից այն չի ներկայացվել: Առկա է անհամապատասխանություն՝ 25.07.2022 թվականին ՀՀ

ոստիկանության և «Տոյոտա-Երևան» ՍՊ ընկերության միջև կնքված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ պայմանագրի 3.2 կետով սահմանված պահանջի հետ:

Այնուամենայնիվ, ՀՀ ֆինանսների նախարարությունից, պայմանագրի գնի 100%-ի չափով՝ 3,107,500.0 հազ.դրամ, գումարը փոխանցվել է «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

4. ՀՀ Կառավարությունը 2022 թվականի հուլիսի 26 N 1135-Ն որոշումով փոփոխություն է կատարել 2022 թվականի հուլիսի 21 N1129-Ն որոշման 4-րդ կետի մեջ՝ թույլատրել է ՀՀ ոստիկանությանը ոստիկանական մեքենաների ձեռքբերման նպատակով մատակարար կազմակերպությանը հատկացնել կանխավճար՝ պայմանագրի գնի 100%-ի չափով, պայմանով, որ մատակարար կազմակերպությունը վճարված կանխավճարի չափով բանկային երաշխիքի ձևով կանխավճարի ապահովումը պատվիրատուին կներկայացնի պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարությունում հաշվառելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 28-ից: Այսինքն՝ սահմանվել է, որ «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ն մինչև 2022 թվականի օգոստոսի 7-ը պետք է ՀՀ ոստիկանությանը ներկայացներ բանկային երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում: Սակայն, 01.10.2022 թվականի դրությամբ, «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ն կանխավճարի ապահովում չի ներկայացրել:

Պայմանագրի կողմերը չեն պահպանել ՀՀ Կառավարությունը 2022 թվականի հուլիսի 26 N 1135-Ն որոշման պահանջը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Դիտողությունը ընդունվել է: Հաշվի կառնվի հետագա գործառույթների իրականացման համար: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ երաշխիքները չի տրամադրվել, սակայն տրանսպորտային միջոցները մատակարարվել են սահմանված ժամկետներում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը:

4.3 ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ԱՎՏՈԼՎԱՑՈՒՄ-12

2022 թվականի ընթացքում՝ ՀՀ Ոստիկանությանը պատկանող ծառայողական, ճանապարհապարեկային, հատուկ ուղեկցումների և պարեկային ծառայության ավտոմեքենաների լվացման ծառայությունների ձեռք բերման նպատակով, ՀՀ Ոստիկանության տնտեսական վարչության ավտոտնտեսության պետի զեկուցագրով, Ոստիկանության տնտեսական վարչությունը 2021 թվականի նոյեմբեր ամսին նախաձեռնել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-Ավտոլվացում-12 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Գնահատող հանձնաժողովի կողմից 18.11.2022 թվականին հրապարակվել է գնանշման հարցման միջոցով գնում կատարելու հրավերի տեքստը: 30.11.2021 թվականին ընթացակարգի բացման նիստում արձանագրվել է, որ մասնակցության հայտ է ներկայացրել ընդամենը մեկ ընկերություն՝ «ԱԿԱ 3» ՍՊԸ, որն առաջարկել է պայմանագիրը կատարել 38,235.0 հազ. դրամ ընդհանուր գնով՝ նույնքան, որքան կազմում էր հայտի նախահաշվային արժեքը: 08.12.2021 թվականին հրավիրված նիստի ընթացքում մասնակից ընկերությունը, բանակցությունների արդյունքում, գնի նվազեցում չի կատարել և գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել է հայտարարություն «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին:

27.12.2021 թվականին ՀՀ Ոստիկանության և «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-Ավտոլվացում-12 ծառայության պայմանագիրը, որով կատարողը ստանձնում է 2022 թվականի ընթացքում թվով 221 հատ սեդան թափքով և թվով 7 հատ ամենագնաց թափքով ավտոմոբիլների լվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջների:

2022 թվականի փետրվարի 11-ին Ոստիկանության և «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի միջև կնքվում է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-Ավտոլվացում-12 գնման պայմանագրի N1 համաձայնագիրը՝ ընդհանուր 38,235.0 հազ. դրամ արժեքով և համաձայնագրի 1.3 կետով սահմանվում է, որ համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ

Հաշվեքննող խմբի կողմից ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունում և ավտոտնտեսությունում (հայտը նախագծող պատասխանատու ստորաբաժանում) իրականացվել է պայմանագրի արդյունքների զննում և վերահաշվարկ, ինչի արդյունքում արձանագրվել է՝

1. Ըստ պայմանագրի N1 հավելվածի «ԱԿԱ 3» ՍՊԸ պայմանագրով ստանձնած պարտավորությունները պետք է մատուցի ք. Երևան, Ծ. Իսակովի 7 հասցեում: Հաշվեքննող խմբի պահանջով ՀՀ ոստիկանությունը ներկայացրել է «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի իրավունքները տվյալ տարածքի նկատմամբ հաստատող փաստաթուղթը, որն իրենից ներկայացնում է 23.12.2021 թվականին կնքված ենթավարձակալության պայմանագիր, ըստ որի Կատարողը «Ֆլեշ» ՍՊԸ-ից վարձակալել է Ծ. Իսակով պողոտայի 7/7 հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասը (ավտոլվացման կետը):

ա) Տվյալ տարածքի զննությունից պարզ դարձավ, որ «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պայմանների պահանջները՝ այն է, (7) ավտոլվացման կետը պետք է ունենա միաժամանակ ոչ պակաս 3 ավտոմեքենա լվանալու հնարավորություն (փաստացի՝ միաժամանակ 2 մեքենայի հնարավորություն), (9) առանձին փակ սպասասրահի առկայություն՝ առնվազն 15ք.մ. և (2) ... պետք է գտնվի Շոպրոնի 77 հասցեից մինչև 6 կմ հեռավորությամբ (փաստացի՝ 10կմ և ավել):

Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից չեն պահպանվել «Գնումների մասին” ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի պահանջները, այն է՝ (5) Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները): Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը: (6) Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

բ) Եթե ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված հասցեում գտնվող ավտոլվացման կետը դիտարկել է որպես պայմանագրով սահմանված

ծառայությունների մատուցման օբյեկտ, ուրեմն պետք է առնվազն պահանջեր, որպեսզի մասնակցի/կատարողի կողմից ներկայացված ենթավարձակալության պայմանագիրը, օրենքով սահմանված կարգով, ունենար նոտարական վավերացում (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 610 և հոդված 654, մաս 2), իսկ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցում (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ՝ 611 և 655), քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «գույքի նկատմամբ միայն գրանցված իրավունքներն ու սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ, ... ու դրանց վերաբերյալ գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ և ունեն ապացուցողական ուժ...»:

2. 2022 թվականի մարտ ամսվա ընթացքում մատուցված ծառայության դիմաց վճարելու նպատակով 2022 թվականի ապրիլի 13-ին «ԱԿԱ 3» ՍՊԸ-ն ՀՀ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացրել հարկային հաշիվ, որտեղ մատուցված ծառայությունների քանակը ունիվերսալ թափքով մեքենաների մասով գերազանցում է պայմանագրով նախատեսված քանակներից՝ առավելագույնը 70 ավտոլվացման փոխարեն հաշիվ է ներկայացրել 124 ավտոլվացման համար: Սակայն թե՛ հայտը նախագծողի և թե՛ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից սույն փաստը հաշվի չի առնվել ու տրվել է դրական եզրակացություն և N3 արձանագրությունով արդյունքներն ընդունվել են:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.1, 1.2, 2.2.1, 2.4.1, 3.3 կետերի պահանջների հետ, որը պատասխանատվություն է առաջացնում Կատարողի նկատմամբ պայմանագրի 5.2 կետի ուժով՝ տուգանքի նշանակում 191 175 (38 235 000 x 0.5%) ՀՀ դրամի չափով: Իսկ պայմանագրով չնախատեսված թվով 54 ավտոլվացման համար ավել վճարված գումարը՝ 88 213 ՀՀ դրամը:

Պատվիրատուի գործողություններում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հետ, այն է՝ Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

3. N ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-Ավտոլվացում-12 պայմանագրի հավելված 3.1-ի համաձայն, պայմանագրի արդյունքը մատակարարի կողմից ՀՀ ոստիկանությանը հանձնելու փաստը ֆիքսելու նպատակով 17.05.2022 թվականին կազմվել է փոխադարձ ԱԿՏ: Նույն օրն էլ կողմերը կազմել և կնքել են պայմանագրի կատարման արդյունքների Հանձնման-ընդունման արձանագրություն՝ չնայած այն

հանգամանքին, որ արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացող երկու փաստաթղթերը՝ Կատարողը Ա5010246353 հաշիվ վավերագիրը և գնման հայտը նախագծած ներկայացուցիչը դրական եզրակացությունը, և տվել են ՝ 18.05.2022 թվականին (այսինքն՝ մեկ օր ուշ):

Ըստ էության, ՀՀ ոստիկանությունը պայմանագրի արդյունքը ընդունել է, առանց կատարողի կողմից հաշիվ ներկայացնելու և մասնագիտական դրական եզրակացության:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N526-Ն որոշման Կարգի 17-րդ գլխի 109-րդ կետով սահմանված պահանջի հետ:

4. 2022 թվականի մայիս ամսվա ընթացքում մատուցված ծառայության դիմաց վճարելու նպատակով 2022 թվականի հունիսի 24-ին «ԱԿԱ 3» ՍՊԸ-ն Ոստիկանության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացրել հարկային հաշիվ, ըստ որի ունիվերսալ թափքով մեքենաների մասով իրականացրել է 58 լվացում, սակայն հայտը նախագծած ներկայացուցիչը, մայիս ամսվա համար, դրական եզրակացություն է տվել ունիվերսալ թափքով մեքենաների 52 լվացման համար: Պատասխանատու ստորաբաժանման կողմից սույն փաստը հաշվի չի առնվել և ընդունվել է 58 մեքենայի լվացման ծառայություն և հետևաբար կատարողին ավել է վճարվել:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N526-Ն որոշման Կարգի 17-րդ գլխի 109-րդ կետի սահմանված, ինչպես նաև պայմանագրի 3.3 կետով սահմանված պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

ՀՀ ոստիկանության պետի տեղակալի հանձնարարությամբ ստեղծվել է հանձնաժողով գնման գործընթացներում տեղ գտած անհամապատասխանությունների ուսումնասիրման նպատակով:

Հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ կտրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

4.4 ՀՀ Ո ԳՀԾՁԲ-33-ԼՎԱՑՈՒՄ-2022/ՄԱՐԶԵՐ

2021 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ ոստիկանությունը 2022 թվականի իր կարիքների համար՝ ՀՀ մարզերի 19 քաղաքներում ավտոմեքենաների լվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով նախաձեռնել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-33-ԼՎԱՑՈՒՄ-2022/ՄԱՐԶԵՐ ծածկագրով գնման ընթացակարգը՝ գնանշման հարցման միջոցով, 19 չափաբաժիններով: Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել թվով չորս ընկերություն և, քանի որ նախահաշվային գները հրապարակված են եղել, բոլոր ընկերություններն էլ ներկայացրել են նույն գները՝ ըստ չափաբաժինների նախահաշվային գների, և միայն կազմակերպված միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակիցները կատարել են գների որոշակի նվազեցում:

Արդեն 2021 թվականի դեկտեմբերի 29-ին գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակիցներ են ճանաչվել՝

«ՀԵՆԴ ԱՐՏ» ՍՊԸ՝ թվով 11 չափաբաժիններով, 25,244.0 հազ. դրամ առավելագույն արժեքով

«ՄՄԿԱ» ՍՊԸ՝ թվով 4 չափաբաժիններով, 8,236.0 հազ. դրամ առավելագույն արժեքով

«ԱԿԱ 3» ՍՊԸ՝ թվով 3 չափաբաժիններով, 5,087.0 հազ. դրամ առավելագույն արժեքով

«Գուրգեն Անտոնյան Կառլենի» Ա/Ձ՝ թվով 1 չափաբաժնով, 4,110.0 հազ. դրամ առավելագույն արժեքով

Արդյունքում՝ 2022 թվականի հունվարի 10-ին ՀՀ Ոստիկանության և վերոնշյալ ընկերությունների միջև կնքվել է ավտոլվացման ծառայությունների ձեռքբերման 4 պայմանագրեր՝ ըստ շահած չափաբաժինների:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ

Հաշվեքննող խմբի կողմից ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունում և ավտոտնտեսությունում (հայտը նախագծող պատասխանատու ստորաբաժանում) իրականացվել է պայմանագրի արդյունքների զննում և վերահաշվարկ, ինչի արդյունքում արձանագրվել է՝

1. ՀՀ ոստիկանության և թվով չորս ընկերությունների միջև կնքված պայմանագրերում բացակայում են ՀՀ մարզերի 19 քաղաքներում ծառայությունների մատուցման տեղակայման վայրերը (ավտոլվացման կետերի հասցեները): ՀՀ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանումից պահանջվել է հաշվեքննող խմբին ներկայացնել ավտոլվացման կետերի հասցեները՝ դրանց համապատասխանությունը պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին համադրելու նպատակով: Դրան ի պատասխան ՀՀ ոստիկանության ՏԿ պետի տեղակալը (պատասխանատու ստորաբաժանման ղեկավար) տեղեկացրել է, որ Ոստիկանության տնտեսական վարչությունը չի տիրապետում այդ տեղեկատվությանը, նաև գրությունով տեղեկացրել է, որ 2022 թվականի նոյեմբերին դիմել են շահող կազմակերպություններին, որպեսզի ներկայացնեն ծառայությունների մատուցման տեղակայման վայրերը և դրանց իրավական կարգավիճակի վերաբերյալ փաստաթղթերը, սակայն 20.12.2022 թվականի դրությամբ չեն ներկայացրել:

Այսինքն, ՀՀ Ոստիկանությունը մրցույթի արդյունքում 2022 թվականի տարեսկզբից պայմանագիր է կնքել թվով չորս ընկերությունների հետ, որոնք ՀՀ մարզերում պետք է մատուցեն ավտոլվացման ծառայություններ, սակայն վերջիններիցս ո՛չ մրցույթի գնահատման փուլում, և ո՛չ էլ պայմանագրի կատարման փուլում չի պահանջել ներկայացնել ավտոլվացման կետերի փաստացի հասցեները, հետևաբար չի համոզվել մրցութային հայտի և պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին դրանց համապատասխանությանը:

Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի պահանջները, այն է՝ (5) Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը

հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները): Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը: (6) Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

2. Հաշվեքննող խմբի կողմից 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, զննում և դիտարկում ընթացակարգով, այցեր են կազմակերպվել Շիրակի և Լոռու մարզեր՝ ոստիկանական մեքենաների լվացման ծառայությունների մատուցման գործընթացին փաստացի ծանոթանալու նպատակով: Այսպես, չնայած այն հանգամանքին, որ Ոստիկանությունը Գյումրի քաղաքում ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել «ՄՄԿԱ» ՍՊԸ-ի հետ, իսկ Վանաձոր քաղաքում «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի հետ տեղում փաստացի արձանագրվեց, որ Գյումրիում պարեկային ծառայության մեքենաները լվացվում են «Մելոյան Սմբատ» Ա/Ձ-ին պատկանող ավտոլվացման կետում, որի հետ էլ ՀՀ ոստիկանության պատասխանատու պարեկային ծառայողը վարում է ինչ-որ փաստաթղթաշրջանառություն (կտրոններ, հանձնման-ընդունման ակտեր), իսկ Վանաձորում պարեկային ծառայության մեքենաները լվացվում են «Արմեն Արշակյան» Ա/Ձ-ին պատկանող ավտոլվացման կետում և վերջինիս հետ էլ ևս վարվում է ոչ պայմանագրային հիմունքով փաստաթղթաշրջանառություն:

3. Ոստիկանության և «ՀԵՆԴ ԱՐՏ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-33-ԼՎԱՑՈՒՄ-2022-ՄԱՐԶԵՐ/1 պայմանագրի շրջանակներում Կատարողը 2022 թվականի սեպտեմբեր ամսվա մատուցված նույն ծառայությունների համար վճարման է ներկայացրել 2 հաշիվ վավերագիր՝ հոկտեմբերի 3-ին՝ 1,552.973 հազ. դրամի և հոկտեմբերի 14-ին՝ 1,575.930 հազ. դրամի: Երկու դեպքում էլ կողմերի միջև կազմվել են պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու վերաբերյալ ԱԿՏ, տրվել է դրական եզրակացություն և երկու դեպքում էլ կողմերի միջև կազմվել և կնքվել է կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրություն: Ի դեպ, արձանագրություններից մեկով ընդունվել է նաև պայմանագրով չնախատեսված ծառայություն՝ մասնավորապես ներկայացվել է, որ Հրազդան քաղաքում լվացվել է թվով 10 ունիվերսալ թափքով մեքենա, ինչը նախատեսված չէ

պայմանագրով, սակայն ՀՀ ոստիկանության կողմից ընդունվել է և հոկտեմբերի 14-ի հաշիվ վավերագրի հիման վրա վճարվել է ամբողջությամբ 1,575.930 հազ. դրամ՝ չնվազեցնելով պայմանագրով չնախատեսված աշխատանքների արժեքի չափով:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.1, 1.2, 2.2.1, 2.4.1, 3.3 կետերի պահանջների հետ, ինչը պատասխանատվություն է առաջացնում Կատարողի նկատմամբ պայմանագրի 5.2 կետի ուժով՝ տուգանքի նշանակում 126 220 (25 244 000 x 0,5%) ՀՀ դրամի չափով: Արդյունքում ավելին է վճարվել 22957 ՀՀ դրամ:

Պատվիրատուի գործողություններում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հետ, այն է՝ Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

4. ա) Ոստիկանության և «ԱԿԱ 3» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-33-ԼՎԱՑՈՒՄ-2022/ՄԱՐԶԵՐ/3 պայմանագրի շրջանակներում Վանաձոր քաղաքում պատվիրվել է 2400 հատ սեղան թափքով մեքենայի և 120 հատ ունիվերսալ թափքով մեքենայի լվացման ծառայություն: 2022 թվականի օգոստոսի 30-ին «ԱԿԱ 3» ՍՊ ընկերությունը ՀՀ ոստիկանություն է ներկայացրել 2022 թվականի հունվար-հուլիս ամիսներին մատուցված ծառայությունների համար կազմված ակտը և յոթ ամիսների կատարված աշխատանքի վճարման համար հարկային հաշիվը: Թե՛ ակտում, և թե՛ հարկային հաշվում զետեղվել են մատուցված ծառայություններ, որոնք նախատեսված չէին պայմանագրով, սակայն փաստը հաշվի չի առնվել և հանձնման-ընդունման արձանագրությունով ընդունվել է տնտեսական վարչության կողմից և 1,792.4 հազ. դրամը ներկայացվել է վճարման ամբողջությամբ՝ չնվազեցնելով պայմանագրով չնախատեսված աշխատանքների արժեքի չափով :

Այսպես, ըստ պայմանագրի Վանաձոր քաղաքում Կատարողին յոթ ամիսների ընթացքում պատվիրվել է ունիվերսալ թափքով մեքենայի ընդհանուր 70 լվացում, սակայն վերջինս հաշիվ է ներկայացրել 317 լվացման համար, կամ 247-ով ավել, և դրա դիմաց ավելի է վճարվել 568.1 հազ. դրամի չափով:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.1, 1.2, 2.2.1, 2.4.1, 3.3 կետերի պահանջների հետ, ինչը պատասխանատվություն է առաջացնում Կատարողի նկատմամբ պայմանագրի 5.2 կետի ուժով՝ տուգանքի նշանակում 25,435 (5,087,000 x 0,5%) դրամի չափով:

Պատվիրատուի գործողություններում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հետ, այն է՝

Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

բ) Ի դեպ հայտը նախագծողի կողմից դրական եզրակացությունը տրվել է 2022 թվականի օգոստոսի 24-ին՝ այսինքն, մատակարարի կողմից աշխատանքները հանձնելուց և դրանց դիմաց հարկային հաշիվ դուրս գրելուց մեկ շաբաթ առաջ:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ գլխի 109-րդ կետով սահմանված պահանջի հետ՝ այն է ...եզրակացությունը տրամադրվում է ոչ շուտ, քան պայմանագրով արձանագրության հաստատման համար սահմանված վերջնաժամկետին նախորդող աշխատանքային օրը:

5. Ոստիկանության և «ՄՄԿԱ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-33-ԼՎԱՑՈՒՄ-2022/ՄԱՐՁԵՐ/4 պայմանագրի շրջանակներում Գյումրի քաղաքում պատվիրվել է սեդան թափքով մեքենայի 3240 հատ լվացման ծառայություն՝ ընդամենը 3,999.0 հազ.դրամ արժեքով: 2022 թվականի ինը ամիսների «ՄՄԿԱ» ՍՊ ընկերության և Ոստիկանության միջև կազմված փոխադարձ ակտերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ թե՛ Ակտերում, և թե՛ հարկային հաշիվներում Կատարողի կողմից զետեղվել են մատուցված ծառայություններ, որոնք նախատեսված չէին պայմանագրով, սակայն փաստը հաշվի չի առնվել և հանձնման-ընդունման արձանագրությունով ընդունվել է տնտեսական վարչության կողմից և ներկայացվել է վճարման ամբողջությամբ՝ չնվազեցնելով պայմանագրով չնախատեսված աշխատանքների արժեքի չափով :

Այսպես, ըստ պայմանագրի Գյումրի քաղաքում Կատարողին ինը ամիսների ընթացքում պատվիրվել է սեդան թափքով մեքենայի ընդհանուր 2430 լվացում, սակայն վերջինս հաշիվ է ներկայացրել 3137 լվացման համար, կամ 707-ով ավել, և դրա դիմաց, Ոստիկանության կողմից, ավելի է վճարվել 872,615 դրամի չափով:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի՝ 1.1, 1.2, 2.2.1, 2.4.1, 3.3 կետերով սահմանված պահանջների հետ, ինչը պատասխանատվություն է առաջացնում Կատարողի նկատմամբ պայմանագրի 5.2 կետի ուժով՝ տուգանքի նշանակում 41,180 (8 236 000 x 0.5%) դրամի չափով:

Պատվիրատուի գործողություններում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հետ, այն է՝ Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է

այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի հանձնարարությամբ ստեղծվել է հանձնաժողով հետևյալ կազմով՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հրաչյա Մուշեղի Օհանյան, ՀՀ ոստիկանության շտաբի տեսչական վարչության տեսչական ստուգման բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ռաֆիկ Աշոտի Խամբեկյան, ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռադիոկապի ապահովման բաժնի կապի միջոցների վերանորոգման խմբի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ Կարեն Վաչագանի Հարությունյան գնման գործընթացներում տեղ գտած անհամապատասխանությունների ուսումնասիրման նպատակով:

Հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ կտրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

4.5 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2022/ԲԱԶԱ-2

05.01.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «Քանաքեռ կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱԶԱ-2 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 78,866.9 հազ. դրամ, թվով երկու չափաբաժինների շրջանակներում մատակարարվող տաբատների

ընդհանուր քանակը՝ 4000 հատ՝ 37,555.2 հազ. դրամ արժեքով, կիսավերարկուների ընդհանուր քանակը՝ 3500 հատ՝ 41,311.7 հազ. դրամ արժեքով:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՋԱ-2 գնման պայմանագրի 07.03.2022 թվականի N1 Համաձայնագրի համաձայն պայմանագրի գումարից հաստատվել է 69,553.1 հազ. դրամ, որտեղ երկու չափաբաժինների շրջանակներում մատակարարվող տաբատների ընդհանուր քանակը մնացել է նույնը՝ 4000 հատ՝ 37,555.2 հազ. դրամ արժեքով, իսկ կիսավերարկուների ընդհանուր քանակը դարձել է 2711 հատ՝ 31,997.9 հազ. դրամ արժեքով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՋԱ-2 գնման պայմանագրի 13.04.2022 թվականի N2 Համաձայնագրի համաձայն պայմանագրի 20 օրվա ընթացքում մատակարարվեիք առաջին խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգվել 30 օրացուցային օրով:

15.04.2022 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատակարարվել է 4,792.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով 406 հատ կիսավերարկու, 25.05.2022 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N2 արձանագրության համաձայն մատակարարվել է 6,397.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով 542 հատ կիսավերարկու: Ընդհանուր թվով մատակարարված 978 կիսավերարկուի դիմաց տրվել է վճարման հանձնարարականներ՝ 11,189.2 հազ. դրամ չափով: 01.08.2022 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N3 արձանագրության համաձայն մատակարարվել է 7,511.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով 800 հատ տաբատ: 03.08.2022 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N4 արձանագրության համաձայն մատակարարվել է 5,633.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով 600 հատ տաբատ, և 9,595.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով 813 հատ կիսավերարկու:

Այսպիսով ընդհանուր թվով մատակարարված 1761 կիսավերարկուի և 1400 տաբատի դիմաց, ըստ էլ ես Ֆայնենս ծրագրի, վճարվել է վերջիններիս գումարային արժեքը կազմող 33,929.4 հազ. դրամ, որից 33,834.6 հազ. դրամի վճարման հանձնարարականներով գումարը ուղղվել է մատակարար կազմակերպությանը, իսկ

94.8 հազ. դրամ տույժի գումարը՝ ֆինանսների նախարարություն (պետական բյուջեի նկատմամբ ստանձնած պարտավորություններ հոդվածով): Վճարված 94.8 հազ. դրամը պայմանավորված է նրանով, որ ըստ ՀՀ ոստիկանության կողմից հաշվեքննողներին ներկայացված 01.08.2022 և 04.08.2022 թվականներին կազմված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՋԱ-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարումների վերաբերյալ թվով երկու Ակտերի, պետք է հաշվարկվեր և վաճառողից գանձվեր 94.8 հազ. դրամ տույժ:

2-րդ չափաբաժնով մատակարարման երրորդ խմբաքանակով՝ 07.03.2022 թվականից սկսված 190 օրվա ընթացքում՝ մինչև 13.09.2022 թվականը, նախատեսված 1200 հատ տաբատի մատակարարումն իրականացվել է 10.11.2022 թվականին՝ 345 հատ, և 11.11.2022 թվականին՝ 855 հատ: Ուշացված օրերի դիմաց (41 և 42 օր) տույժերի գանձման վերաբերյալ կազմվել են թվով երկու ակտեր, որոնց համաձայն ընդհանուր առմամբ վաճառողից պետք է գանձվեր 234.9 հազ. դրամ (փաստացի վճարումը և գանձումը կուսումնասիրվի տարեկան հաշվեքննության շրջանակներում):

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ

• Հարկ է նշել նաև, որ պայմանագրի 2.1.7.1 կետի (բ) ենթակետով հստակեցված չէ վաճառողի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները՝ որպես պայմանագրի էական խախտման պայման: Համաձայն պայմանագրի 6.2 կետի վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով: Քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինչը ՀՀ ոստիկանության կողմից 20.12.2022 թվականի դրությամբ չի ներկայացվել հաշվեքննողներին:

• Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Պայմանագրի շրջանակներում մատակարարվող տաբատից «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ ուղարկված նմուշի վերաբերյալ 22.11.2022 թվականին «Փորձագիտական կենտրոն»

ՊՈԱԿ կողմից կազմվել է փորձագիտական եզրակացություն, ըստ որի տաբատի համար օգտագործված գործվածքի մակերեսային խտությունը կազմել է 252.26 գ/մ^2, բաղադրությունը՝ 68.7% բրդյա մանրաթել, 31.3% պոլիէսթեր: Հարկ է նշել, որ տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջը արձանագրված է եղել հետևյալ կերպ՝ առնվազն 67% բրդյա, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ^2 258գ.: Արդյունքում արձանագրվել է, որ տաբատից նմուշառված կտորը չի համապատասխանել երկու ցուցանիշների մասով միաժամանակ՝ պոլիէսթերի պարունակություն և քաշ: Հետևաբար՝ տեխնիկական բնութագրով անհրաժեշտ է ճշգրտել սահմանված պահանջները՝ կիրառելով «առնվազն», և «առավելագույնը» բառերը համապատասխանաբար, ինչպես նաև քաշի համար նշել չափման սխալանքի միջակայք՝ հաշվի առնելով դրա բաղադրիչներից կախված խտության վրա ազդող հնարավոր առանձնահատկությունները: Տվյալ գնման գործընթացում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»: Պայմանագրով նախատեսված և մատակարարվող կիսավերարկուի մասով ՀՀ ոստիկանությունը, չի օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից և չի պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ինչ վերաբերվում է վաճառողը գնորդին համապատասխանության սերտիֆիկատի ներկայացմանը, ապա պայմանագրի վերջում աստղանիշով ծանոթության գրառման մեջ նշված է, որ «Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի, ապրանքանշանի, ֆիրմային անվանման և այլ տեղեկատվության ներկայացմանը, ապա հանվում է այդ սյունակը»: Պայմանագրով նախատեսման դեպքում է վաճառողը գնորդին ներկայացնում համապատասխանության սերտիֆիկատ, ինչը մեր հրավերով և տեխնիկական բնութագրում նշված չէ:

Համաձայն «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված փորձագիտական եզրակացության «Տաբատի» կտորի բաղադրությունը կազմել է 68,7% բրդյա մանրաթել (ըստ տեխնիկական բնութագրի առնվազն 67%), ինչը ավելի որակյալ է, 31,3% պոլիէսթեր (ըստ տեխնիկական բնութագրի 33%):

Հաշվի առնելով, որ բուրդը ավելի թեթև է պոլիէսթերից՝ գործվածքի մակերեսային խտությունը նվազել է: Հարկ է նշել, որ կտոր արտադրող գործարանները կտորի

թոփերի վրա քաշի համար ըստ նորմերի նշում են չափման միավորի տատանման թույլատրելի շեղում՝ ± 5%:

Ձեր դիտողությունը բաղադրության պարունակության ձևակերպման մասով «Առնվազն», «Առավելագույնը» և «Քաշի համար չափման սխալանքի միջակայքը» ի նկատի է առնվել և հետագայում տեխնիկական բնութագրերում տվյալ չափորոշիչները կձևակերպվեն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է գնման առարկայի նկարագրի անհամապատասխանության փաստը (բաղադրության պարունակության ~~ճիշտ~~ ձևակերպման մասով): Ինչ վերաբերում է վաճառողը գնորդին համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջին, ապա հրավերի 1-ին մասի 4-րդ կետի, 4.3 ենթակետի, 3-րդ կետով սահմանված է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշ, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ ունեցող ապրանքներ: Այս պահանջի առկայության մասին է վկայում նաև այն փաստը, որ մասնակից հանդիսացող «Քանաքեռ կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի էլեկտրոնային աճուրդի մասնակցության հայտում ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի աղյուսակում առկա են ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշ, արտադրողի անվանումը բնութագրող պահանջները: Հետևաբար այս մասով բերված հիմնավորումը չի ընդունվում : ~~Ինչ վերաբերում է հաջորդ՝ ավելի լավ որակի կտոր լինելու հիմնավորմանը, ապա մեր կողմից այն նույնպես ընդունելի չէ հետևյալ պատճառով. խոսքը չի գնում ավելի լավ կամ վատ կտորի մասին՝ մենք արձանագրել ենք տեխնիկական բնութագրով սահմանված չափանիշներից շեղումները:~~

4.6 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1

17.12.2021-ին ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 74,078.2 հազ. դրամ, թվով 3 չափաբաժինների շրջանակներում մատակարարվող պոլո շապիկներ ընդհանուր քանակը՝ 4500 հատ՝ 29,332.8 հազ. դրամ արժեքով, վերնաշապիկների ընդհանուր քանակը՝ 3000 հատ՝ 14,651.0 հազ. դրամ արժեքով, կիսավերարկուների ընդհանուր քանակը՝ 1600 հատ՝ 30,094.4 հազ. դրամ արժեքով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 գնման պայմանագրի 28.02.2022 թվականի N1 Համաձայնագրի համաձայն պայմանագրի գումարից հաստատվել է 50,916.6 հազ. դրամ, որտեղ թվով 3 չափաբաժինների շրջանակներում եղել է նվազեցումներ՝ մատակարարվող պոլո շապիկներ ընդհանուր քանակը դարձել է՝ 3000 հատ՝ 19,555.2 հազ. դրամ արժեքով, վերնաշապիկների ընդհանուր քանակը՝ 1800 հատ՝ 8,790.6 հազ. դրամ արժեքով, կիսավերարկուների ընդհանուր քանակը՝ 1200 հատ՝ 22,570.8 հազ. դրամ արժեքով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 գնման պայմանագրի 09.04.2022 թվականի N2 Համաձայնագրի համաձայն պայմանագրի 20 օրվա ընթացքում մատակարարվելիք առաջին խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ

- Քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինչը ՀՀ ոստիկանության կողմից 20.12.2022 թվականի դրությամբ չի ներկայացվել հաշվեքննողներին:
- Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Պայմանագրի շրջանակներում մատակարարվող կիսավերարկուից «Սիստեմէքս» փորձագիտական կենտրոն ուղարկված նմուշի վերաբերյալ 18.11.2022 թվականին վերջինիս կողմից կազմվել է փորձագիտական եզրակացություն, ըստ որի կիսավերարկուի համար

օգտագործված գործվածքի մակերեսային խտությունը կազմել է 150 գ/մ^2: Հարկ է նշել, որ տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջը արձանագրված է եղել հետևյալ կերպ՝ տեսակարար կշիռը 130 գ/մ^2: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ կիսավերարկուից նմուշառված կտորը չի համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված քաշի ցուցանիշին: Պայմանագրով նախատեսված և մատակարարվող պոլո շապիկների և վերնաշապիկների մասով ՀՀ ոստիկանությունը, չի օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից և չի պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ինչ վերաբերվում է վաճառողը գնորդին համապատասխանության սերտիֆիկատի ներկայացմանը, ապա պայմանագրի վերջում աստղանիշով ծանոթության գրառման մեջ նշված է, որ «Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի, ապրանքանշանի, ֆիրմային անվանման և այլ տեղեկատվության ներկայացմանը, ապա հանվում է այդ սյունակը»: Պայմանագրով նախատեսման դեպքում է վաճառողը գնորդին ներկայացնում համապատասխանության սերտիֆիկատ, ինչը մեր հրավերով և տեխնիկական բնութագրում նշված չէ:

«Կիսավերարկուի» կտորի տեսակարար կշիռը պետք է լիներ 130գ/մ^2, սակայն ստացված փորձագիտական եզրակացությամբ ստացվել է 150գ/մ^2: Հետևաբար ձմեռային պայմաններում 150գ/մ^2 տեսակարար կշիռով կտորը ավելի ամուր և որակյալ է:

Ձեր դիտողությունը բաղադրության պարունակության ձևակերպման մասով 2023թ-ի տեխնիկական բնութագրերի կազմման ժամանակ հաշվի է առնվել:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է դիտողությունը բաղադրության պարունակության ճիշտ ձևակերպման մասով: Ինչ վերաբերվում է վաճառողը գնորդին համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջին, ապա հրավերի 1-ին մասի 4-րդ կետի, 4.3 ենթակետի, 3-րդ կետով սահմանված է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշ, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ ունեցող ապրանքներ: Այս պահանջի առկայության մասին է վկայում նաև այն փաստը, որ մասնակից

հանդիսացող «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա» ՍՊԸ -ի էլեկտրոնային աճուրդի մասնակցության հայտում ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի աղյուսակում առկա են ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշ, արտադրողի անվանումը բնութագրող պահանջները: Հետևաբար այս մասով բերված հիմնավորումը չի ընդունվում:

4.7 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1

17.12.2021 թվականին ՀՀ ոստիկանության և «Տեքսուորլդ» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 98,728.1 հազ. դրամ, թվով 1 չափաբաժնի շրջանակներում մատակարարվող կոստյումների ընդհանուր քանակը՝ 4000 հատ:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 գնման պայմանագրի 01.03.2022 թվականի N1 Համաձայնագրով հաստատվել է պայմանագրով սահմանված 98,728.1 հազ. դրամը, որի վճարումը կիրականացվի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համապատասխան:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 գնման պայմանագրի 12.08.2022 թվականի N2 Համաձայնագրով նախատեսվել է երրորդ խմբաքանակի մատակարարման 170 օրվա ընթացքում մատակարարվելիք 1200 հատ խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ մինչև 07.10.2022 թվականը (20օր+170օր+30օր):

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ

• Առաջին կիսամյակի հաշվեքննության ընթացքում արձանագրել էինք, որ պայմանագրի համաձայն կոստյումների մատակարարման երկրորդ խմբաքանակից (ընդհանուր 800 հատ) 300 հատ կոստյումների մատակարարումը 8 աշխատանքային օր ուշացնելու համար չէր հաշվարկվել և գանձվել 29.6 հազ. դրամ: Վերջինիս և 100 հատ կոստյումի մատակարարման ժամկետի ուշացման վերաբերյալ 17.10.2022 թվականին կազմված մատակարարումների վերաբերյալ Ակտի համաձայն հաշվարկվել և գանձվել է 59,2 հազ. դրամ: Հարկ է նշել, որ 100 հատ կոստյումի մասով տույժի գանձման հաշվարկը և գանձումը հիմնավոր չէ, հետևաբար պետք է գանձվեր միայն 29.6 հազ. դրամը: Առկա է անհամապատասխանություն

պայմանագրի 6.2 կետով սահմանված պահանջի հետ: Կոստյումների մատակարարման երկրորդ խմբաքանակից (ընդհանուր 800 հատ) 500 հատը համաձայն N3, N4 հանձման և ընդունման արձանագրությունների մատակարարվել են համապատասխանաբար 28.06.2022 և 06.07.2022 թվականներին: Չնայած մատակարարման ժամկետի ուշացման համար 28.06.2022 և 06.07.2022 թվականներին կազմվել են ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարումների վերաբերյալ Ակտեր՝ համաձայն որոնց նախատեսվում էր ընդհանուր առմամբ հաշվարկվել և գանձվել 101.8 հազ. դրամ, սակայն համաձայն 11.07.2022, 19.07.2022 թվականների վճարման հանձնարարականների մատակարարին էր փոխանցվել մատակարարված ապրանքի ամբողջ գումարը: Տույժի գումարը ՀՀ ոստիկանությունից ՀՀ ֆինանսների նախարարություն էր փոխանցվել 21.10.2022 թվականին: Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N526-Ն որոշման Կարգի 7-րդ գլխի 33-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջի հետ:

• Հարկ ենք համարում նշել, որ է 03.10.2022թ թվականին մատակարարված 100 հատ կոստյումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից հաշվեքննողներին են ներկայացվել 04.10.2022 թվականին կազմված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարումների վերաբերյալ Ակտի համաձայն հաշվարկվել և գանձվել է 17.3 հազ. դրամ տույժ /ՀՀ ոստիկանությունը տույժը հաշվելիս մատակարարման վերջնաժամկետ է համարել 11.09.2022թ-ը/, ինչը կարծում ենք ճիշտ չէ, քանի որ համաձայնագիր 2-ով երրորդ խմբաքանակի մատակարարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 07.10.2022 թվականը, այսինքն իրականում մատակարարման ժամկետի խախտում չի եղել: Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 6.2 կետով սահմանված պահանջի հետ:

• Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Պայմանագրի շրջանակներում մատակարարվող կոստյումից «Սիստեմէքս» փորձագիտական կենտրոն ուղարկված նմուշի վերաբերյալ 18.11.2022 թվականին վերջինիս կողմից կազմվել է փորձագիտական եզրակացություն, ըստ որի կոստյումի համար օգտագործված գործվածքի բաղադրությունը կազմել է՝ 67.55% բրդյա մանրաթել, 32.45% պոլիէսթեր: Հարկ է նշել, որ տեխնիկական բնութագրով նախատեսված

պահանջը արձանագրված է եղել հետևյալ կերպ՝ առնվազն 67% բրդյա, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ^2 314գ.: Հետևաբար տեխնիկական բնութագրով անհրաժեշտ է ճշգրտել սահմանված պահանջները՝ կիրառելով «առնվազն» և «առավելագույնը» բառերը համապատասխանաբար, ինչպես նաև քաշի համար նշել չափման սխալանքի միջակայք՝ հաշվի առնելով դրա բաղադրիչներից կախված խտության վրա ազդող հնարավոր առանձնահատկությունները: Տվյալ գնման գործընթացում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նշված 29.6 հազ. դրամ գումարը գանձվել է և ուղարկվել է պետական բյուջե, որը ներառվել է 17.10.22թ. կազմված ակտով:

12.08.2022թ. համաձայնագիր N 2 1.1 կետով սահմանվում էր, որ «Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում 170 օրվա ընթացքում մատակարարվելիք ապրանքների՝ 1200 հատ խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացույցային օրով», ուստի տույժերը հաշվարկվել են 170+30=200 օրով (այլ ոչ թե 220 օր):

Ինչ վերաբերվում է վաճառողը գնորդին համապատասխանության սերտիֆիկատի ներկայացմանը, ապա հայտնում եմ, որ պայմանագրի վերջում աստղանիշով ծանոթության գրառման մեջ նշված է, որ «Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի, ապրանքանշանի, ֆիրմային անվանման և այլ տեղեկատվության ներկայացմանը, ապա հանվում է այդ սյունակը»: Պայմանագրով նախատեսման դեպքում է վաճառողը գնորդին ներկայացնում համապատասխանության սերտիֆիկատ, ինչը մեր հրավերով և տեխնիկական բնութագրում նշված չէ:

Ձեր կողմից նշված բաղադրության պարունակության ձևակերպման մասով «Առնվազն», «Առավելագույնը» և «Քաշի համար չափման սխալանքի միջակայքը» ի նկատի է առնվել և հետագայում տեխնիկական բնութագրերում տվյալ չափորոշիչները կձևակերպվեն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է գնման առարկայի նկարագրի անհամապատասխանության փաստը (բաղադրության պարունակության ~~ճիշտ~~ ձևակերպման մասով): Այն հիմնավորումը, որ 170 օրվա ընթացքում մատակարարվելիք ապրանքների՝ 1200 հատ խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացույցային օրով, նշանակում է, որ չպետք է հաշվի առնվի պայմանագրի մատակարարման ժամանակացույցով սահմանված համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օր հետո պայմանը և մատակարարման վերջնաժամկետ պետք է համարել 11.09.2022 թվականը (200 այլ ոչ թե 220 օր հետո) չի ընդունվում՝ կարգավորող որևէ իրավական ակտով չհիմնավորված լինելու պատճառով :

4.8 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ1

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ դեռևս 03.08.2022 թվականին ՀՀ ոստիկանության պետից ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին ուղղված թիվ 1124/67268-22 գրության մեջ արձանագրվել է այն փաստը, որ Լոռու և Շիրակի պարեկային ծառայության ռադիոցանցի գործարկման համար ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԲՏԱՆ) կողմից տրամադրված տիրույթում հաճախականության զույգերի գործարկման ընթացքում ի հայտ են գալիս տեխնիկական խնդիրներ: Խնդրի պարզաբանման նպատակով ՀՀ ԲՏԱՆ ՀՀԿ (հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն) ՊՈԱԿ-ի և ՀՀ ոստիկանության կապի վարչության ծառայողների հետ համատեղ Գյումրի և Վանաձոր քաղաքներում իրականացվել են էլեկտրամագնիսական իրավիճակի չափումներ և հետազոտություններ: Արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ կողմից շահագործվող ռադիոլոկատորները զբաղեցրել են այդ տիրույթը ինչը խոչընդոտում է պարեկային ծառայողների ռադիոկապի աշխատանքը: Միաժամանակ տեղեկացվել է, որ նմանատիպ ռադիոլոկատորներ շահագործվում են ՀՀ ՊՆ կողմից հանրապետության ամբողջ տարածքով, որի

արդյունքում լոկատորների առաջացրած ռադիոազդանշանային աղմուկները խաթարելու են ՀՀ տարածքում Պարեկային ծառայողների ռադիոկապի ծածկույթը:

Շիրակի և Լոռու մարզերում զննման, դիտարկման հաշվեքննության ընթացակարգերի շրջանակներում արձանագրվել են նաև հետևյալ անհամապատասխանությունները.

• Առկա է անհամապատասխանություն պայմանագրի Հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի հետ, մասնավորապես նախատեսված է Շիրակի և Լոռու մարզում տեղադրել 20 վերահաղորդիչ կայան (10 կետ ամեն մարզում), սակայն փաստացի Շիրակի մարզում նախատեսվել և տեղադրվել է 4-ը, իսկ Լոռու մարզում՝ 13-ը: Ավելացված և չօգտագործվող 3 հատը գտնվում են ՀՀ ոստիկանության պահեստում:

• Առկա է անհամապատասխանություն պայմանագրի Հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի հետ, մասնավորապես թվային կապի կառավարման համակարգը (օպերատիվ կառավարման կենտրոն, կամ ՕԿԿ) ՀՀ-ում արտակարգ դրության դեպքում ցանցը պետք է կարողանա համագործակցել ՀՀ ՊՆ և ԱԻՆ ռադիոկապի համակարգերի հետ, ինչը սակայն, 29.11.2022 թվականի դրությամբ, Շիրակի մարզի իսկ, 12.12.2022 թվականի դրությամբ, Լոռու մարզի ՕԿԿ-երից հնարավոր չէ, քանի որ դեռևս համագործակցության հաճախականության միջակայքերի ճշգրտում չի եղել:

• Կազմվել են նաև թվով 8 արձանագրություններ, որոնք վերաբերում են Շիրակի և Լոռու մարզերի պարեկային ծառայողների և ՕԿԿ-երի կողմից օգտագործվող դյուրակիր, շարժական, ստացիոնար թվային ռադիոկայանների միջև կապի հաստատման լրիվ կամ մասնակի անհնարինության դեպքերին: Լոռու մարզում ռադիոկապի աշխատանքի հետ կապված խնդիրներն արձանագրված են նաև 07.12.2022-14.12.2022 թվականը ընկած ժամանակահատվածում Լոռու պարեկների կողմից իրականացված ծառայության ընթացքում ՕԿԿ-ի ծառայողների կողմից հայտնաբերված խնդիրներն արտացոլող թվով 5 Տեղեկանքներում:

• Շիրակի և Լուռու մարզերի ՕԿԿ-երն արտակարգ կամ վթարային իրավիճակներում, էլեկտրականության խափանման կամ անջատումների դեպքում ապահովված չեն էլեկտրականության լրացուցիչ սնուցման աղբյուրով և միջոցներով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ1 ծածկագրով գնման մրցույթը հայտարարելիս դեռ հայտնի չեն եղել «Չափագրական հետազոտությունների ծառայություններ» արդյունքները: ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում նախնական հաշվարկով որոշվել է տեղադրել 20 վերահաղորդիչ կայան, ընդհանուր քանակի մեջ

հաշվի առնելով նաև պահուստային վերահաղորդիչները՝ հավանական խափանումներն արագ վերացնելու նպատակով, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել ոստիկանական գործառույթների անխափան իրականացումը:

«Տոպազ–95» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ոստիկանությանը տրամադրվել է պարտավորագիր այն մասին, որ պահուստային վերահաղորդիչների տեղադրման առաջին իսկ պահանջի դեպքում այն կիրականացվի:

Համակարգի գործարկման առաջին իսկ օրվանից առկա են եղել ռադիոեթերը խաթարող խնդիրներ կապված ՀՀ Պաշտպանության Նախարարությանը պատկանող լոկատորների աշխատանքի հետ: 29.09.2022թ. ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից հատկացվել են նոր ռադիոհաճախականային զույգերի, որոնցում ռադիոեթերը համեմատաբար ավելի քիչ աղմկոտ են, իսկ ներկայումս դեռ կատարվում են թվային ռադիոկապի համակարգի բարելավվման աշխատանքներ: Ներկայումս ընդհանում են բանակցություններ, ՀՀ–ում արտակարգ դրության դեպքում ՀՀ Պաշտպանության Նախարարության և Արտակարգ Իրավիճակների Նախարարության հետ ռադիոկապի մեկ միասնական համակարգ կազմակերպելու վերաբերյալ:

ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում կատարված ստուգումների ժամանակ անսարք է եղել մեկ վերահաղորդիչ կայան, որը նույնպես ռադիոեթերի խափանման առիթ է հանդիսացել:

ՀՀ ոստիկանության ՕԿԿ–ներում առկա չեն շարժիչային հոսանքի տվիչներ, իսկ էլեկտրականության խափանման դեպքում միևնույնն է բացակայում է ինտերնետ կապը և ցանցի հասանելիությունը, ինչը նույնպես հանգեցնում է ռադիոկապի խաթարման:

Արձանագրված անհամապատասխանությունը ընդունվել է ի գիտություն, և ՀՀ ոստիկանության բոլոր ՕԿԿ–ները համալրվել են անխափան սնուցման սարքերով, որոնք էլեկտրականության խափանման դեպքում կարող են ապահովել միայն աշխատասենյակներում առկա սարքավորումների անխափան աշխատանքը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվել են համապատասխան միջոցառումներ:

4.9 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՈՒԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8

ՀՀ ոստիկանության կարիքների համար «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8-2» ծածկագրով 6 չափաբաժիններով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու արդյունքում 5 (կիսաճտքավոր կոշիկներ) և 6 (ամենօրյա կոշիկներ) չափաբաժիններով մասնակցել և հաղթող է ճանաչվել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն: Միայն 6 (ամենօրյա կոշիկներ) չափաբաժնով մյուս մասնակիցն է հանդիսացել՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն: Պայմանագիրը կնքվել է 17.12.2021 թվականին, պայմանագրի գինը՝ 103,514.4 հազ. դրամ (այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը և ակնկալվող շահույթը), որի շրջանակներում նախատեսվել էր մատակարարել 1600 զույգ կիսաճտքավոր և 1600 զույգ ամենօրյա կոշիկներ: Համաձայն պայմանագրի 8.5 և 8.13 կետերի 10.03.2022 թվականին կնքվել էր համաձայնագիր 1-ը, որով առաջին խմբաքանակի մատակարարումը նախատեսվել էր համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո, 20 օրվա ընթացքում՝ 240 զույգ կիսաճտքավոր կոշիկներ՝ 8,351.6 հազ. դրամ և 240 զույգ ամենօրյա կոշիկներ՝ 7,175.5 հազ. դրամ արժեքներով ընդամենը՝ 15,527.2 հազ. դրամ արժեքով: Տարվա առաջին կիսամյակում մատակարարվելիք ապրանքների նմուշների հաստատման վերաբերյալ փաստաթղթեր հաշվեքննություն իրականացնող խմբին չեն ներկայացրել: Պայմանագրի տեխնիկական բնութագրերը ուսումնասիրելիս ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ իրականացված 3, ինչպես նաև 6 ամիսների հաշվեքննությունների շրջանակներում արձանագրվել էին մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես. «մասամբ կաշվից», «մաշակայուն նյութից», «երկարաժամկետ օգտագործման համար», «կոշտ և կաշվից», «բարձր ճնշման տակ միացված», «մետաղյա փոլակներ», «կաշվե ներդիր», «ներդիրը կտորե», «յուղի և սայթաքման դիմացկուն», «բարձր օդաթափանցություն», «ամուր են ու հարմարավետ» նկարագրող բառերն ու արտահայտությունները որևէ կերպ չեն սահմանում տեխնիկական պարամետրեր, նույնականացման համար պահանջում են մարդու զգայունության ազդակներով կատարվող ներգործություն, չափելի չեն ուստի որպես գնման առարկայի բնութագրող տվյալ՝ անպիտան են ու որ առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»: Ավելին, արձանագրվել է անհամապատասխանություն նաև ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 13-րդ կետի՝ ...Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 214-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտում ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն նկատմամբ իրականացված ընթացիկ եզրակացությամբ, ՀՀ ոստիկանությունից հայցվել էր տեղեկատվություն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունները վերացնելուն ուղղված ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: 2022 թվականի դեկտեմբերի 5-ին թիվ ՀՊՄ/483/2022 գրությամբ ներկայացվել էր պատասխան գրություն, որին կից ի թիվս այլ փաստաթղթերի կցվել էին «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8-2» պայմանագրի շրջանակներում մատակարարված կոշկեղենի վերաբերյալ «Սիստեմէքս» փորձարկման լաբորատորիա ՍՊ ընկերության թվով երկու՝ 23.09.2022 թվականի թիվ 2-20220923-10 (հայտատու՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչություն) և 29.09.2022 թվականի թիվ 2-20220929-4 (հայտատու՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ) փորձարարական արձանագրություն-արդյունքները, համաձայն որոնց, նշված ամսաթվերին 42 համարի մեկական զույգ կիսաճտկավոր կոշիկներ է ներկայացվել փորձաքննության, ինչին ի պատասխան «Սիստեմէքս» փորձարկման լաբորատորիան նշելով, որ փորձարկման արդյունքը տարածվում է միայն փորձարկված նմուշների վրա, ներկայացրել է բառացի հետևյալ պատասխանները մեջբերում՝ «կիսաճտկավոր կոշիկը ունի բնական (ԽԵԱ) կաշվի դետալներ (մանրակներ), այսինքն՝ այն մասամբ բնական կաշվից է և նեյլոնից: Տակացուն մաշակայուն նյութից է:» մեջբերման ավարտ:

Հաշվեքննիչ պալատը արձանագրել էր, որ՝ «մասամբ կաշվից», «մաշակայուն նյութից», «երկարաժամկետ օգտագործման համար», «կոշտ և կաշվից», «բարձր ճնշման տակ միացված», «մետաղյա փոլակներ», «կաշվե ներդիր», «ներդիրը կտորե», «յուղի և սայթաքման դիմացկուն», «բարձր օդաթափանցություն», «ամուր են ու հարմարավետ» նկարագրող բառերն ու արտահայտությունները որևէ կերպ չեն սահմանում տեխնիկական պարամետրեր, նույնականացման համար պահանջում են մարդու զգայունության ազդակներով կատարվող ներգործություն, չափելի չեն որպես գնման առարկայի բնութագրող տվյալ՝ ուստի անպիտան են նույնականացման համար, ինչը ըստ էության վերահաստատվել է նաև մասնագիտացված «Սիստեմէքս»

փորձարկման լաբորատորիա ՍՊ ընկերության կողմից անցկացված համապատասխան թվով երկու փորձաքննությունների արդյունքներով:

Ելնելով վերոշարադրյալից հաշվեքննություն իրականացնող խումբը վերահաստատում է, որ տվյալ գնման գործընթացում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը», ինչպես նաև նույն օրենքի նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվածի հետ, այն է՝ «Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա»:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Տեխնիկական բնութագրերում նշված են «նմուշը **համաձայնեցնել** պատվիրատուի հետ», ինչը արվել է:

Ինչ վերաբերվում է պատասխանատու ստորաբաժանումում գնման առարկայի բնութագրելու մասնագիտական կարողություն ունենալուն, ապա գնման առարկաների բազմազանությունը հնարավորություն չի տալիս այդքան մասնագետ ունենալ:

Սույն թվականի սեպտեմբեր ամսին «Էլաամոդա» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել էր «Կիսաճտքավոր կոշիկներ» 1600 զույգ և «Կոշկեղեն» 1600 զույգ ապրանքատեսակների պայմանագրով նախատեսված ողջ քանակները պահեստավորվել է: Հրավիրվել է «Սիստեմէքս» փորձարկման լաբորատորիա ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մատակարարի ներկայացուցիչը և կատարվել նմուշառումներ,

ինչը արձանագրվել է և ստուգումների վերաբերյալ փորձարկման լաբորատորիայի կողմից տրվել համապատասխան եզրակացություն:

2023թ-ի «Կիսաճտքավոր կոշիկ» և «Կոշիկ» անվանատեսակների տեխնիկական բնութագրերում հաշվի են առնվել Ձեր դիտողությունները և տեխնիկական բնութագրերը կազմվել են ավելի հստակ և կոնկրետ պահանջներին համապատասխան:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

4.10 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4) կետով սահմանված հիմքով գնումների վերաբերյալ

ՀՀ ոստիկանությունը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4) կետով սահմանվածը, այն է՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, 2022 թվականի օգոստոսի 15-ին թվով երկու և օգոստոսի 16-ին ևս թվով երկու հարկային հաշիվների հիման վրա ձեռք է բերել ընդհանուր 2,644.05 հազ. դրամի ընդամենը 84 շիշ կոնյակ և գինի՝ կիրառելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 72-րդ կետով սահմանվածը, այն է՝ գնումն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կամ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա կատարվելու դեպքում, եթե կնքվելիք պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորը և այն ենթակա է կատարման կնքման պահին, ապա գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ, և գործարքը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա: Մասնավորապես ըստ «ԱԳՈՒԼԻՍ-ՄԵԿ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 02524823) կողմից դուրս գրված.

- Հարկային հաշիվ 7609656516 առ 15.08.2022 թվականի համաձայն 936,450 ՀՀ դրամով ձեռք է բերվել ընդամենը 45 շիշ ոգելից խմիչքներ, այդ թվում՝ կոնյակ «Վասպուրական» 0.5Լ – 15 հատ (մեկ հատը՝ 22,500 ՀՀ դրամ), կոնյակ «Նաիրի» 0.5Լ – 15 հատ (մեկ հատը՝ 35,250 ՀՀ դրամ), գինի «Կարաս կարմիր» 0.75Լ – 10

հատ (մեկ հատը՝ 4,680 ՀՀ դրամ), գինի «Կարաս սպիտակ» 0.75Լ – 5 հատ (մեկ հատը՝ 4,680 ՀՀ դրամ):

•Հարկային հաշիվ 4510378417 առ 15.08.2022 թվականի համաձայն 648,000 ՀՀ դրամով ձեռք է բերվել ընդամենը 16 շիշ կոնյակ, այդ թվում՝ «Վասպուրական» 0.7Լ – 6 հատ (մեկ հատը՝ 30,000 ՀՀ դրամ), «Նաիրի» 0.7Լ – 10 հատ (մեկ հատը՝ 46,800 ՀՀ դրամ):

•Հարկային հաշիվ 8361944324 առ 16.08.2022 թվականի համաձայն 936,000 ՀՀ դրամով ձեռք է բերվել ընդամենը 20 շիշ «Նաիրի» 0.7Լ (մեկ հատը՝ 46,800 ՀՀ դրամ):

•Հարկային հաշիվ 8431170031 առ 16.08.2022 թվականի համաձայն 123,600 ՀՀ դրամով ձեռք է բերվել ընդամենը 3 շիշ կոնյակ, այդ թվում «Վասպուրական» 0.7Լ – 1 հատ (30,000 ՀՀ դրամ) «Նաիրի» 0.7Լ – 2 հատ (մեկ հատը՝ 46,800 ՀՀ դրամ):

Հարկ է նշել, որ ընդհանուր 2,644.05 հազ. ՀՀ դրամի ընդամենը 84 շիշ կոնյակների և գինիների արժեքները զետեղված հաշիվ ապրանքագրերում նույնական են ք.Երևանում գործող խանութների (https://www.norzovq.am, https://noyantunonline.am և այլն) մանրածախ գներին: Ավելին, կոնյակների հանձնման-ընդունման փաստաթղթի տեխնիկական բնութագրերում զետեղված գույնի, համի և բույրի նկարագրերը զգալի տարբերվում են տվյալ ապրանքները արտադրող «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից տվյալ արտադրատեսակները բնորոշող գույնի, համի և բույրի նկարագրերից (https://am.araratbrandy.com/):

Արձանագրվում է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետով սահմանվածի հետ, այն է՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2022 թվականի օգոստոսի 15-ին թվով երկու և օգոստոսի 16-ին ևս թվով երկու հարկային հաշիվների հիման վրա ձեռք է բերվել ընդհանուր 2.644.05 հազար դրամի ընդամենը 84 շիշ կոնյակ և գինի՝ պատվիրակությունների ընդունման և արտասահմանյան այցելությունների կազմակերպման նպատակով, որի համար հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 23 րդ կետի 4-րդ ենթակետի աղյուսակի 10-րդ տողի ներկայացրած պահանջը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23 րդ կետի 4-րդ ենթակետի աղյուսակի 10-րդ տողի ներկայացրած պահանջը գործում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 15)-րդ կետի սահմանմամբ՝ հատուկ կամ բացառիկ իրավունքը, իրավունք է որը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը: Հետևաբար, քանի որ մատակարար ընկերության մասով հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությունը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, առարկությունը չի ընդունվում:

4.11 «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (018/2011) 5.5 կետի պահանջների հետ առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

Շիրակի և Լոռու մարզերում զննման, դիտարկման հաշվեքննության ընթացակարգերի շրջանակներում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝

Մարզերում պարեկային ծառայողների կողմից շահագործվող Toyota Rav 4 ավտոմեքենաները չունենալով ձմեռային անվադողեր՝ երթևեկում են ամառային անվադողերով, որոնց մասով, զննման, դիտարկման ընթացակարգով կատարված այցելությունների ժամանակ արձանագրվել է, որ վերջիններս գտնվում են ընդհանուր ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար սահմանվածին ոչ համապատասխան վիճակում: Դրա հետևանքով, եղանակային ոչ բարենպաստ պայմաններում վերջիններս դուրս չեն գալիս հերթապահության (վերջինս արձանագրված է 07.12.2022-14.12.2022 թվականը ընկած ժամանակահատվածում Լոռու պարեկների կողմից իրականացված ծառայության ընթացքում օպերատիվ

կառավարման կենտրոնի ծառայողների կողմից հայտնաբերված շուրջ 15 ծառայողական մեքենաների անվադողերի հետ կապված խնդիրներն արտացոլող թվով 5 Տեղեկանքներում):

Նման իրավիճակը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ ձմեռային անվադողերի գնման գործընթացը պետք էր ճիշտ պլանավորվեր՝ հաշվի առնելով ինչպես ձմեռային եղանակային պայմաններում շահագործվող անվադողերի համար գործող օրենսդրական սահմանափակումները, այնպես էլ օգտագործվող ամառային անվադողերի մաշված վիճակը: Փաստացի Toyota Rav 4 մեքենայի ձմեռային անվադողերի ձեռքբերման պահանջը գնումների պլանով հաստատվել է 08.09.2022 թվականին, մրցույթի հրավերը կայացել է 14.09.2022թ-ին, պայմանագիրը կնքվել է 17.10.2022թ-ին, որով նախատեսված է եղել մինչև 20.12.2022 թվականը մատակարարել թվով 280 անվադողերը: Այսպիսով, առկա է անհամապատասխանություն՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի հետ՝ «տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է երթևեկությունն սկսելուց առաջ ստուգել ..... անվադողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության համապատասխանությունը սահմանված նորմերին: Նշված պահանջը տարածվում է տրանսպորտային միջոցի վարորդի վրա նաև երթևեկության ընթացքում», 28 հունիսի 2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները եվ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների եվ պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 955-Ն որոշման Հավելված 2-ի 4-րդ կետի պահանջի հետ՝ «Տրանսպորտային միջոցի անիվների ու դողերի անսարքություններն ու պայմաններն են՝ դողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը պակաս է՝ ... 1,6 մմ՝ թեթև մարդատար ավտոմոբիլների համար», ինչպես նաև «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (018/2011) 5.5 կետի պահանջների հետ՝ «արգելվում է ձմռանը (դեկտեմբեր, հունվար, փետրվար) սույն հավելվածի 5.6.3-րդ կետի պահանջները[15] բավարարող ձմեռային դողերով չլրակազմված՝ M1 և N1[16] կատեգորիայի տրանսպորտային միջոցների շահագործումը:

[15] Ձմեռային այն դողերի պահպանաշերտի նկարի մնացորդային խորությունը, որոնք նախատեսված են սառցապատ կամ ձնեպատ ճանապարհային ծածկույթի վրա շահագործման համար, մակնշված են երեք գագաթներով և ներսում փաթիլով՝ լեռան տեսքով, ինչպես նաև մակնշված՝ նշված ծածկույթի վրա շահագործման ժամանակ «M+S», «M&S», «M S» նշաններով (մաշվածության ցուցիչի բացակայության դեպքում)՝ 4,0 մմ-ից ոչ ավելի:

[16] M1 – Ավտոմեքենաներ, օգտագործվում է մարդկանց տեղափոխելու համար: Այս տեսակի տրանսպորտային միջոցների խցիկում պետք է լինի ոչ ավելի, քան 8 ուղևորի նստատեղ: N1 կատեգորիայի բեռնատարներն ունեն 3,5 տոննայից ոչ ավելի զանգված:

Ձմեռային դողերը տեղակայվում են նշված տրանսպորտային միջոցների բոլոր անիվների վրա»:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

4.12 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ՀԲՄԾ-ՄԵՔԵՆԱՆԵՐ/2022/Հ-17

ՀՀ ոստիկանության և «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ միջև 19.01.2021-ին կնքվել է ՀՀ Ո ՀԲՄԾ-ՄԵՔԵՆԱՆԵՐ/2022/Հ-17 ծածկագրով պայմանագիրը, որի շրջանակներում Կատարողը ստանձնել է 450,000 հազ. դրամ ընդհանուր արժեքի ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորություն:

Պայմանագրի 03.02.2022 թվականի N1 Համաձայնագրով հաստատվել է պայմանագրով սահմանված գումարից 293,263 հազ. դրամը, որի վճարումը կիրականացվի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համապատասխան:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ.

Նախահաշվային գնի որոշման համար հիմք հանդիսացող ըստ ստորաբաժանումների ավտոմեքենաների ցանկ կազմված չի եղել, ինչը հաստատվել և ընդունվել է ՀՀ ոստիկանության կողմից որպես ի գիտություն, և պարտավորվել են իրականացնել վերջինս ըստ պահանջի:

Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրով ներկայացված են մի շարք չափորոշիչներ (օրինակ՝ Կատարողը պետք է ունենա նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝ սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն, պետք է կարողանա միաժամանակ սպասարկել առնվազն թվով 7 (յոթ) ավտոմեքենա և ունենա առնվազն թվով 8 (ութ) էլ. ամբարձիչ, առնվազն 2,5 տոննա բարձրացնելու հնարավորությամբ (домкрат), պետք է ունենա առնվազն թվով 8 (ութ) ավտոմեքենայի համար նախատեսված կայանման(պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկման և պահակային հսկողություն և այդ

ընթացքում իրականացված տեսաձայնագրությունը պետք է պահպանվի առնվազն 30(երեսուն) օր և այլն), որոնք պարտադիր են ծառայություններ մատուցող կազմակերպության համար: ՀՀ ոստիկանությունն իր հերթին պետք է հավաստիանար, որ տվյալ չափորոշիչները իրականում պահպանված են եղել ինչպես մրցույթի ժամանակ, այնպես էլ ծառայությունների մատուցման ընթացքում:

Սահմանված չափորոշիչների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված հավաստիացումների, դրանց մեխանիզմների և առկա փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով 21.11.2022 թվականին գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության ՏՎ պետի տեղակալ-ավտոտնտեսության պետին, որին վերջինս պատասխանել է 25.11.2022 թվականին թիվ 27/1111 գրությամբ, նշելով, որ Հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրով հաստատված չափորոշիչները պահպանված են եղել, ինչպես մրցույթի ժամանակ, այնպես էլ ծառայությունների մատուցման ընթացքում, սակայն դրանց վերաբերյալ կազմված արձանագրություններ առկա չեն: Միևնույն ժամանակ հայտնել է, որ ՀՊ հարցադրումից հետո ևս մեկ անգամ կատարվել են հարցադրումների վերաբերյալ ստուգումներ ծառայություն մատուցող ընկերությունում: Քանի որ ստացված պատասխանը չուներ որևէ փաստաթղթային հիմնավորումներ, որոնք կպարունակեին ստուգումները և/կամ չափումները հավաստող տվյալներ, պայմանագրի Հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրով հաստատված չափորոշիչների վերաբերյալ նույն հարցադրումը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ՏՎ պետի տեղակալ, ավտոտնտեսության պետից վերոնշյալ 25.11.2022 թվականին թիվ 27/1111 գրությամբ հավաստվող ստուգումների ժամանակահատվածի, մեթոդիկայի, ներգրավված անձանց շրջանակի, և արձանագրված փաստաթղթերի պարզաբանման վերաբերյալ հարցադրումը 07.12.2022 թվականին թիվ 0080 հգ. գրությամբ Հաշվեքննիչ պալատից ուղարկվել է ՀՀ ոստիկանության պետին: Վերջինիս պատասխանել են 15.12.2022 թվականին 29/27 հգ. գրությամբ՝ նշելով, որ ընդունվել է ի գիտություն, այսուհետ կիրականացվի ըստ պահանջի, այցեր կատարվել են ավտոսպասարկման կայաններում, սակայն ստուգման վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվել: Այսպիսով առկա է անհամապատասխանություն (ընթացակարգի գնահատման հանձնաժողովի գործունեության մասով)՝ ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջի հետ, այն է հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը որոնցում բացակայում է ..... եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան.....: Իսկ

պատասխանատու ստորաբաժանման մասով առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 108-րդ կետով սահմանված պահանջի հետ՝ այն է՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ընդունվել է ի գիտություն: Հաջորդիվ տեխնիկական բնութագրերի կազմման ժամանակ հաշվի կառնվի:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանության փաստը, կատարվում են համապատասխան միջոցառումներ:

5. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-Շին/ՕԿԿ-47

ՀՀ ոստիկանության և Բիդեք ՍՊ ընկերության միջև 2021 թվականի սեպտեմբերի 3-ին կնքվել է ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-Շին/ՕԿԿ-47 պայմանագիրը՝ 2,192,419.6 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ): Առարկան պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ոստիկանության ք.Երևան, Էրեբունի համայնքի Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) աշխատանքներն է: Ըստ պայմանագրի տվյալների ուսումնասիրության, արձանագրվեց, որ պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից ստորագրել է Ոստիկանության պետի տեղակալը, որը գործել է «կոմիտեի» կանոնադրության հիման վրա: Հարկ է նշել, որ, ՀՀ ոստիկանության պետի առ 01.02.2020 թվականի Թիվ 5-Լ (մինչև 14.09.2021 թվականի խմբագրությամբ) հրամանում առհասարակ բացակայել է ՀՀ ոստիկանության պետի տվյալ տեղակալին վերապահված որևէ գործառույթ, իսկ նշված Թիվ 5-Լ հրամանի մեջ փոփոխություն կատարող 14.09.2021 թվականի Թիվ 42-Լ հրամանի բովանդակությամբ ՀՀ ոստիկանության պետը, տվյալ տեղակալին վերապահել է մի շարք այլ համապատասխան գործառույթների համակարգում, սակայն չի վերապահել պատվիրատուի ղեկավարի որևէ լիազորություն: Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 7-րդ կետի 2) ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվածի հետ, այն է՝ պայմանագիրը կնքում է պատվիրատուի ղեկավարը:

Համաձայն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2022/ԲԱԶԱ-2 պայմանագրի հավելված 2-ի՝ 2-րդ չափաբաժնով 07.03.2022 թվականից սկսված 70 օրվա ընթացքում (առաջին խմբաքանակի մատակարարման ժամկետ), այսինքն՝ մինչև 16.05.2022 թվականը նախատեսված է եղել 5,633.3 հազ. դրամ ընդհանուր արժեքի 600 տաբատների մատակարարում, սակայն, ինչպես արդեն վերը նշել ենք, մատակարարվել է 01.08.2022 թվականին՝ 54 աշխատանքային օր ուշացումով, որի արդյունքում պետք է հաշվարկվեր և գանձվեր 152.1 հազ. դրամ տույժ:

2-րդ չափաբաժնով 07.03.2022 թվականից սկսված 100 օրվա ընթացքում՝ (երկրորդ խմբաքանակի մատակարարման ժամկետ) մինչև 15.06.2022 թվականը

նախատեսված է եղել 7,511.0 հազ. դրամ ընդհանուր արժեքի 800 տաբատների մատակարարում, որից 200 հատը, ինչպես արդեն վերը նշել ենք, մատակարարվել է 01.08.2022 թվականին՝ 32 աշխատանքային օր ուշացումով, որի արդյունքում պետք է հաշվարկվեր և գանձվեր 30.0 հազ. դրամ տույժ, իսկ մնացած 600 հատը մատակարարվել է 03.08.2022 թվականին՝ 34 աշխատանքային օր ուշացումով, որի արդյունքում պետք է հաշվարկվեր և գանձվեր 95.8 հազ. դրամ տույժ:

Ընդհանուր առմամբ պետք է հաշվարկվեր և գանձվեր 277.9 հազ. դրամ տույժ, սակայն հաշվարկվել և գանձվել է ընդամենը 94.8 հազ. դրամը: (183.1 հազ. դրամ պակաս հաշվարկման և գանձման պատճառը կայանում է նրանում, որ ՀՀ ոստիկանությունը տույժը հաշվելիս մատակարարման ժամկետը հաշվել է համաձայնագիր 2-ի ստորագրման պահից սկսած՝ 13.04.2022 թվականը. այնինչ պետք է հիմք ընդուներ համաձայնագիր 1-ի ստորագրման ժամկետը՝ 07.03.2022 թվականը):

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

04.08.2022թ.-ին «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ–ից «Տաբատ» ապրանքատեսակը ուշացնելու համար ՀՀ ոստիկանության ՏՎ հանդերձանքի ապահովման բաժնի կողմից հաշվարկվել են երկու ակտեր և հաշվանցվել է տույժ՝ 75111 և 19720 (ընդհանուր՝ 94831) ՀՀ դրամ գումար: Կատարված կրկնակի ստուգման արդյունքում պարզվել է, որ տույժերի գումարը պետք է ավելանա ևս 107031 և 76046 (ընդհանուր՝ 183077) ՀՀ դրամով, որի համար 19.12.2022թ-ին կազմվել են համապատասխան ակտեր և կատարվել է հաշվանցում: Կից ներկայացվում են համապատասխան ակտերը և վճարման հանձնարարականը՝ 196768,5 ՀՀ դրամի, որից 183077ՀՀ դրամը արձանագրված տույժն է և 13691,48 ՀՀ դրամը՝ տույժ 4-րդ եռամսյակում ուշացված ապրանքատեսակի համար: Առդիր 4 թերթ:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը հաշվեքննության ընթացքում կատարել է վերահաշվարկ և 23.12.2022 թվականին գանձել է 183.1 հազ. դրամ տույժը:

Համաձայն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 պայմանագրի հավելված 2-ի՝ 1-ին չափաբաժնով 28.02.2022 թվականից սկսված 100 օրվա ընթացքում՝ /երկրորդ խմբաքանակի մատակարարման ժամկետ/ մինչև 08.06.2022 թվականը նախատեսված է եղել 3,911.0 հազ. դրամ ընդհանուր արժեքի 600 պոլո շապիկների մատակարարում, որից 300 հատը մատակարարվել է 01.06.2022 թվականին /ուշացում չկա/: Մնացած 300-ը մատակարարվել է

05.09.2022թ թվականին՝ 63 աշխատանքային օր ուշացումով, որի արդյունքում պետք է հաշվարկվեր և գանձվեր 61.6 հազ. դրամ տույժ: Հարկ ենք համարում նշել, որ 05.09.2022թ թվականին մատակարարված վերը նշված 300 հատ պոլո շապիկների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից հաշվեքննողներին է ներկայացվել 06.09.2022 թվականին կազմված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարումների վերաբերյալ Ակտ, որի համաձայն ՀՀ ոստիկանությունը հաշվարկել և մատակարարից գանձել է 82.1 հազ. դրամ տույժ: ՀՀ ոստիկանությունը տույժը հաշվելիս մատակարարման վերջնաժամկետ է համարել 08.05.2022թ-ը՝ 08.06.2022թ-ի փոխարեն, այսինքն ավել է հաշվարկել և գանձել 20.1 հազ. դրամ չափով տույժ:

1-ին չափաբաժնով մատակարարման երրորդ խմբաքանակով՝ 28.02.2022 թվականից սկսված 190 օրվա ընթացքում՝ մինչև 06.09.2022 թվականը, նախատեսված 900 հատ պոլո շապիկները մատակարարվել են 05.10.2022 թվականին, սակայն 20 աշխատանքային օր ուշացման դիմաց չի հաշվարկվել և գանձվել տույժ՝ 58.7 հազ. դրամի չափով:

2-րդ և 4-րդ չափաբաժնով Համաձայնագիր 1-ի ստորագրման 28.02.2022 թվականից սկսված, առաջին խմբաքանակի մատակարարման 70 օրվա ընթացքում, այսինքն մինչև 09.05.2022 թվականը, նախատեսված է եղել 1,318.6 հազ. դրամ ընդհանուր արժեքի 270 վերնաշապիկների և 3,385.6 հազ. դրամ ընդհանուր արժեքի 180 կիսավերարկուների մատակարարում: Ըստ 03.11.2022 թվականին կազմված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարումների վերաբերյալ Ակտի վերը նշված ապրանքները մատակարարվել են 03.11.2022թ-ին, և մատակարարման վերջնաժամկետը համարելով 09.04.2022 թվականը՝ 09.05.2022 թվականի փոխարեն, հաշվարկել և գանձել են 345,7 հազ. դրամի չափով տույժ՝ այդ թվում՝ 270 վերնաշապիկների համար 96.9 հազ դրամ՝ 83.0 հազ. դրամի փոխարեն, իսկ 180 կիսավերարկուների համար՝ 248.8 հազ. դրամ՝ 213.3 հազ. դրամի փոխարեն: Այսինքն ընդհանուր առմամբ ավել է գանձվել 49.4 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

1-ին չափաբաժնով 06.09.2022թ-ին «Մասիսի գարուն ԿՖ» ՍՊԸ–ից «Պոլո շապիկ» ապրանքատեսակը ուշացնելու համար հաշվարկվել և հաշվանցվել է տույժ ավել 21511 դրամի չափով: 20.12.22թ-ի նոր ակտով 900 հատ «Պոլո շապիկների» համար հաշվարկվել է 58665,6 դրամ տույժի գումար, որից նվազեցվել է վերը նշված ավել վճարված 21511,0 դրամը արդյունքում հաշվանցվել է 37154,6 դրամ: Կից

ներկայացվում են համապատասխան ակտը և վճարման հանձնարարականը՝ 37154,6 ՀՀ դրամի: Առդիր 2 թերթ:

Հաշվի առնելով, պայմանագրի ավարտը և ավել գանձված գումարի ոչ էական չափը, ըստ էության հնարավոր չէ նշված գումարի վերադարձը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը հաշվեքննության ընթացքում կատարել է վերահաշվարկ և 26.12.2022 թվականին գանձել է 37,1 հազ. դրամ տույժը: Իսկ ավել գանձված 49.4 հազ. դրամ տույժը հնարավոր չի եղել վերադարձնել:

6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 214-Ա ՈՐՈՇՄԱՄԱԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի (ՀՀ ՀՊ մտից թիվ ՀՊՄ/483/2022) գրությանը կից ներկայացված տեղեկանքի համաձայն ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում ներկայացված թվով 9 առաջարկություններն ամբողջությամբ ընդունվել են: Գրությանը կից ներկայացված ՀՀ ոստիկանության պետի տեղակալի՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ին հաստատված ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում ներկայացված առարկությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Առաջարկությունները	Միջոցառումը	Պատասխանատուն	Ժամկետը
1. ՀՀ ոստիկանության կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության մասով պլանավորման ցուցանիշները առավել իրատեսական (էական տարբերությունները հնարավորինս բացառելու համար) սահմանելու նպատակով պարբերաբար վերանայել դրանք պարտադիր հաշվի առնելով ՀՀ ոստիկանության կողմից նախաձեռնվող մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում շարունակաբար կատարվող լրացումների և/կամ փոփոխությունների, ինչպես նաև գլոբալ տնտեսաքաղաքական իրադարձությունների արդյունքում երևույթաբար առաջացող էական տատանման գործոնները:	Գործուն և հետևողական միջոցներ ձեռնարկել ոստիկանության միջնաժամկետ ծախսերի ծրագրերի, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա բյուջեի մուտքերի և ելքերի հիմնավորվածությունն էապես բարելավելու, առավել իրատեսական ցուցանիշներ ներկայացնելու և սահմանելու ուղղությամբ:	Ֆինանսա բյուջետային վարչություն, Կենտրոնական ապարատի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներ, Մարզային վարչություններ	Շարունակական
2. Քննարկել, սույն ընթացիկ եզրակացության 4-6-րդ մասերում նշված ապրանքների և/կամ ծառայությունների մի շարք պայմանագրերի մատակարարների կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագրերն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու հարցերը՝ պահանջելով վերջիններիցս Միջազգային և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով փոխհատուցել իրենց մեղքով պատվիրատուի (ՀՀ ոստիկանության)	Հիմնական ապրանքների, անվանատեսակների մասով լաբորատոր փորձաքննության իրականացում և մատակարարների կողմից ապրանքների, ծառայությունների սահմանված ժամկետներից ուշ մատակարարումների դեպքում տույժերի և տուգանքների կիրառում, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների	Տնտեսական, Իրավաբանական, ինչպես նաև գնումների պատասխանատու մյուս ստորաբաժանումներ	Շարունակական

կրած վնասներն այն ծավալով, որոնց մասով պայմանագրերը կլուծվեն:	չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պայմանագրի ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծում		
3. Քննարկել 07.01.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերության միջև կնքված պետության կարիքների համար տեղագրական քարտեզների կազմման ծառայությունների մատուցման պետական գնման «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022/Քարտեզ» պայմանագրի շրջանակներում ՀՀ ոստիկանությանը հանձնված արդյունքների տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագրի մանրամասներին համապատասխան լինելու հարցը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան ծրագրային կարգաբերումներ ՀՀ ոստիկանության կողմից այդ ծրագրերը կիրառող բոլոր տեխնիկական միջոցներում:	Տեղագրական քարտեզների կազմման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում ոստիկանությանը հանձնած արդյունքների և տեխնիկական բնութագրի համապատասխանեցում:	Ներքին անվտանգության և Կապի վարչություններ	Շարունակական
4. Այն դեպքերում երբ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը պարունակում են որոշակի հստակ ճշտության պարամետրերի ապրանքի մատակարարում, իսկ պայմանագրերը նախատեսում են այդ ապրանքների նույնականացման համար մատակարար կազմակերպության միջոցների հաշվին լաբորատոր փորձաքննության եզրակացության պահանջ՝ հետամուտ լինել, որպեսզի ՀՀ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանումները, ապրանքներն ընդունելուց առաջ, պարտադիր պահանջեն լաբորատոր փորձաքննության արդյունքները՝ իրացնելով պայմանագրով վերապահված իրավունքը:	Ապրանքների նույնականացման նպատակով մատակարար կազմակերպության միջոցների հաշվին լաբորատոր փորձաքննության եզրակացության պահանջի ներկայացում:	Տնտեսական, ինչպես նաև գնումների պատասխանատու մյուս ստորաբաժանումներ	Շարունակական
5. Գնման ընթացակարգերը որակելիս պահպանել ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 5) ենթակետով սահմանված պահանջը, այն է՝ գնման ընթացակարգը որպես ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը, բացառությամբ շինարարական աշխատանքների: Այդ նպատակով անհրաժեշտ է գնման հայտերը կազմելիս պարտադիր տարանջատել գնման առարկայում ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքները, ինչը հնարավորություն կընձեռի նաև սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի գրանցումն իրականացնել «Հանրային հատվածի	Ապրանքները և ծառայությունները որակելու նպատակով, դրանց գնման ընթացակարգերը կազմակերպելիս գնման առարկաների արժեքների տարանջատում:	Տնտեսական, ինչպես նաև գնումների պատասխանատու մյուս ստորաբաժանումներ	Շարունակական

կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջների համապատասխան՝ գործառնությունների չափման միավորները դրամական և/կամ բնաիրային արտահայտությամբ հիմնական միջոցների ու սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման գործընթացները:			
6. Գնումների դիմաց վճարումներ կատարելիս խստագույնս պահպանել ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 5) ենթակետով սահմանված պահանջը, այն է՝ գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ: Հետայսու տեղիք չտալով սահմանված կարգով չհաշվարկված ու չգանձված տույժերի վերաբերյալ մատակարարների կողմից ՀՀ ոստիկանությանը տվյալ պարտավորության մասին հիշեցման նախադեպային դեպքերին:	Սահմանված ժամկետներից ուշ գնման առարկաների մատակարարումների դեպքում տույժերի և տուգանքների կիրառում:	Տնտեսական, ինչպես նաև գնումների պատասխանատու մյուս ստորաբաժանումներ	Շարունակական
7. Գնման գործընթացները և դրանց նախորդող այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածով (կարգով) նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:	Գնման գործընթացներն իրականացնելիս պահպանել պլանավորված պահանջարկի ժամկետները, հաշվի առնելով իրավական կարգավորմամբ դրանց ժամկետների վրա ազդող գործոնները:	Տնտեսական, ինչպես նաև գնումների պատասխանատու մյուս ստորաբաժանումներ	Շարունակական
8. Ի լրումն ՀՀ ոստիկանությունից 05.09.2022 թվականին (ՀՊ մտից՝ ՀՊՄ/274/2022) «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան ներկայացված **2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 164-Ա որոշմամբ հաստատված** ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ	ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ ուսումնասիրել և ներկայացնել դիրքորոշում 13.01.2022թ.-ին «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1» պայմանագրով պետության կարիքների համար 2,443,380,000 դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գումարով ձեռք բերված ընդամենը 140 հատ ավտոմեքենաների գնման	Ներքին անվտանգության և Տնտեսական վարչություններ	17.12.2022թ.

եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությանը, ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացնել նշված ընթացիկ եզրակացության «առաջարկություններ» մասի 9-րդ (13.01.2022 թվականին «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագիր) և 10-րդ (17.12.2021 թվականին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ ՈԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8» պայմանագիր) կետերով բերված առաջարկությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն:	ու մատակարարման գործընթացում հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Միջոցներ ձեռնարկել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման հետ տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին հնարավորինս համապատասխանեցնելու հարցում մեթոդական օժանդակություն ստանալու համար:		
9. Ի լրումն ՀՀ ոստիկանությունից 05.09.2022 թվականին (ՀՊ մտից՝ ՀՊՄ/274/2022) «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան ներկայացված **2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 164-Ա որոշմամբ հաստատված** ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությանը՝ ՀՀ ոստիկանությունում (ՆԳՆ պետական կառավարման մարմնի ձևավորմանը ընդառաջ) հաշվապահական հաշվառումը կարգավորող ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա կազմակերպելու նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթի հայտարարման պայմանների ու ժամկետների որոշակիության վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն:	Հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա, խորհրդատուի ընտրության մրցույթի հայտարարման պայմանների ու ժամկետների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:	Ֆինանսաբյուջետային և Տնտեսական վարչություններ	ՆԳՆ ձևավորման ընթացքում 2023թ. 1-ին եռամսյակ

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ներքին գործերի նախարարությանը (Ոստիկանության մասով)՝

1. Գերատեսչության կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության մասով պլանավորման ցուցանիշները առավել իրատեսական (էական տարբերությունները հնարավորինս բացառելու համար) սահմանելու նպատակով պարբերաբար վերանայել դրանք պարտադիր հաշվի առնելով ՀՀ ոստիկանության կողմից նախաձեռնվող մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում շարունակաբար կատարվող լրացումների և/կամ փոփոխությունների, ինչպես նաև գլոբալ տնտեսաքաղաքական իրադարձությունների արդյունքում երևույթաբար առաջացող էական տատանման գործոնները:

2. Այն բոլոր դեպքերում, երբ ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 3-րդ կետով սահմանվածի համապատասխան ՀՀ կառավարությունը առանձին դեպքերում սահմանում է որևէ գնման գործընթացի համար առանձնահատկություն (առանց կարգով սահմանված պայմաններից մեկի կամ մի քանիսի պահպանման, անհրաժեշտության դեպքում, կիրառելով դրան փոխարինող այլ պայման), անհրաժեշտ է լիարժեք և ամբողջական ապահովել սահմանված առանձնահատկությունների կատարումը՝այսուհետ տեղիք չտալով ՀՀ կառավարության կողմից սահմանված գնման գործընթացի համար որոշված առանձնահատկությունների պայմանների չկատարմանը և/կամ մասնակի կատարմանը:

3. Գնման առարկաների բնութագրերը կազմելիս հաշվի առնել, որ դրանք պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝

բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ հատկանիշները հնարավորինս պետք է ներառեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և/կամ ստանդարտների պայմանների վրա:

4. Գնման պայմանագրերի պահանջներով սահմանված պայմանների լիարժեք և ամբողջական կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնել պարբերաբար, ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 108-րդ կետով սահմանված պահանջի համապատասխան, պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում արձանագրելով հսկողության արդյունքները:

5. Գնումների դիմաց վճարումներ կատարելիս պահպանել ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 5) ենթակետով սահմանված պահանջը, այն է՝ գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ: Հետայսու տեղիք չտալով սահմանված կարգով չհաշվառման ու չգանձման և/կամ նախատեսվածից տարբերվող չափերով գանձման դեպքերին:

6. Գնման գործընթացները և դրանց նախորդող այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածով (կարգով) նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:

7. Ի լրումն ՀՀ ոստիկանությունից 05.09.2022 թվականին (ՀՊ մտից՝ ՀՊՄ/274/2022), ինչպես նաև 05.12.2022 թվականին (ՀՊ մտից՝ ՀՊՄ/274/2022) գրություններով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան ներկայացված 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 164-Ա որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությանը, ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացնել նշված ընթացիկ եզրակացության «առաջարկություններ» մասի 9-րդ (13.01.2022 թվականին «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագիր) կետով բերված առաջարկությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն:

8. Հետամուտ լինել նախարարությունում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջի համապատասխան ներքին աուդիտի համակարգի ներդրման, ռազմավարական/տարեկան պլանավորման ու իրականացման հարցում՝ համակարգում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում, գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանության հավաստիացման, տեղեկությունների վստահելիության և ամբողջականության, ինչպես նաև

կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիության նպատակով:

9. Միջոցներ ձեռնարկել գերատեսչությունում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա կազմակերպելու ուղղությամբ, որը իրենից ներկայացնում է օրենսդրությամբ սահմանված որոշակի սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջություն:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

Կարեն Կարապետյան _____

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

« 25 » <u>հունվարի</u> 2023 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Մ.Բաղրամյան 19, Երևան

Հայաստանի Հանրապետություն